# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 232 (24513), հատավաճառ՝ 20000 ռիալ
سال نودودوم - شماره ۲۳۲ (۲۴۵۱۳) - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ
13 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2023

دوشنبه – ۲۲ آبان ۱۴۰۲

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir


# ԲԱՔՈՒԻ ՆԿԱՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԲԱՐՁՐԱՁԱՅՆԵԼԸ «ՍԻՈՆԻՍՏԱԿԱՆ» ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Է

## Պանթուրքիստների նոր ռազմավարութիւնը

*«ԱԼԻՔ» - Թաքֆիրականների տեղաշարժ ուժերի կուտակում է նկատւում Իրանի հիւսիսարեւմտեան սահմանների մօտ: Միեւնոյն ժամանակ Էրդողանը որոշ քուրդ պաշտօնեաների միջոցով փորձում է սիրիական բանտերից ազատել ԴԱԷՇ-ի ձերբակալւած շուրջ 10000 վարձկանների: Այս մասին են տեղեկացնում սոցիալական ցանցերում գործող տարբեր հաշիւներ, որոնք վերագրւում են նախկին պաշտօնեաներին, կամ փորձագիտական շրջանակներին:*

*Նոյն կապակցութեամբ Էհսան Մովահեդեանն իր տելեգրամային ալիքում գրառում հրապարակելով, նշել է, որ հաւաստի աղբիւրների հաստատմամբ՝ Արցախում տեղակայւած թաքֆիրականներին ասել են, որ շուտով Իրանի հետ անելու են այն, ինչը արեց ՀԱՄԱՍ-ը Իսրայէլի հետ:*




*Մովահեդեանն իր զարմանքն է յայտնել այն մասին, որ ինքնակոչ «Հեզբոլլահ»-ի ոմն պանթուրքիստ, ով նաեւ որոշ տւեալների համաձայն՝ համարւում է կառավարական մարմիններում ելումուտ ունեցող որոշ անձանց վստահելիներից, «X»-ի իր միկրոբլոգում գրառումներ է տեղադրում, որում նա փաստերը խեղաթիւրելով «Հուէյնիուն» խմբաւորումը անւանել է իսրայէլական թեւ, եւ յայտարարել, որ այդ խմբի նպատակը Բաքւի հետ «մեր» յարաբերութիւններում լարւածութիւն ստեղծելն է:*

*«2020 թւականի պատերազմից առաջ «Հուէյնիուն»-ը բազմիցս զգուշացրել էր նման պատերազմի չարաբաստիկ ու կուլիսային նպատակների մասին, որի վրայ աչք փակեց ժամանակի ԱԳՆ-ը: Իսկ այսօր մի կերպ է յաջողւել այդ ընթացքը դադարեցնել սրտցաւ ու անկախ փորձագէտների հրապարակումների ու զգուշացումների շնորհիւ:*

*Այս տարիներին Թեհրանում, Ալիքի լաբբին առաջ անցնելով շարունակել է մեղադրել Իրանի ամբողջականութեան պահպանման ուղղութեամբ հայրենասիրական նիւթեր հրապարակող ակտիւիստներին, նրանց ներկայացնելով*

(Շար. 8-րդ էջում)

ԻՅՊԿ-ի ցամաքային զօրքերի հրամանատար.

## ««Ալ-Աքսայի փոթորիկ»-ը ի չիք դարձրեց սիոնիստական ռեժիմի ռազմական մարտավարութիւնը»





*«ԱԼԻՔ» - Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի ցամաքային զօրքերի հրամանատարն ասել է. ««Ալ-Աքսայի փոթորիկ» գործողութիւնը Պաղեստինի անպաշտպան ժողովրդի ընդվզումն է ընդդէմ Իսրայէլի 75-ամեայ ճնշումների, օկուպացիայի եւ սպանդի, որն ի չիք դարձրեց սիոնիստական ռեժիմի ռազմական մարտավարութիւնը:*

*Ինքնապաշտպանութեան պատրւակով Արեւմուտքի կողմից Իսրայէլի ռեժիմին ցուցաբերւող աջակցութիւնը փաստօրէն կանաչ լոյս եւ արտօնագիր է այս ռեժիմի համար՝ շարունակելու պաղեստինցի երեխաների եւ կանանց դաժան սպանդը»:*

*«Parstoday.ir»-ի համաձայն՝ Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի ցամաքային զօրքերի հրամանատար, գեներալ Մոհամմադ Փաքփուրն Իրանի հարաւ-արեւմտեան սահմանային կէտեր այցի ժամանակ ասել է. «Իրանի Զինւած ուժերի գերագոյն գլխաւոր հրամանատարը շատ դիպուկ ու խելամտօրէն ասել է, որ «Ալ-Աքսայի փոթորիկ» գործողութեան ընթացքում սիոնիստների կրած պարտութիւնն անվերադարձ է»:*

*Գեներալ Փաքփուրն այս այցի ընթացքում նաեւ մօտից գնահատել է Իրանի հարաւ-արեւմուտքում տեղակայւած սահմանային շրջանների, օպերատիւ, հրետանային, հեռահաղորդակցութեան եւ մարտավարական տարբեր ստորաբաժանումների վերջին իրավիճակը, եւ Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի մարտական եւ պաշտպանական նախապատրաստական աշխատանքները:*

## Մահացել է Հայ Դատի բարեկամ դոկտ. Դաւուդ Հերմիդաս Բաւանդը



*«ԱԼԻՔ» - Երէկ՝ նոյեմբերի 12-ին, 89 տարեկան հասակում մահացել է դոկտ. Դաւուդ Հերմիդաս Բաւանդը:*

*Միջազգային յարաբերութիւնների մասնագէտը, համարւում էր Իրանի արտաքին քաղաքականութեան ոլորտի ամենաճանաչւած փորձագէտներից մէկը: Նա երկար տարիներ աշխատակցել է Իրանի ԱԳ նախարարութեանը եւ դասաւանդել է Թեհրանի համալսարանում:*

*Դոկտ. Հերմիդաս Բաւանդը հայ ժողովրդի եւ Հայ Դատի իրանցի մեծ բարեկամներից էր, եւ համագործակցել է «ՀՈՒՍԿ» հաստատութեան հետ:*

Հրաչեայ Խաչատրեանը՝ «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում.

## «Օրակարգը այսօր պէտք է լինի ուժեղ եւ պաշտպանւած Հայաստանի կերտումը»



*Իշխանական լրատւութիւնը լցւել է «Խաղաղութեան խաչմերուկ»-ի պրոպագանդայով, բայց այն աւելի շատ մակերեսային եւ երեւացող երեւոյթ է, որովհետեւ մարդկանց այլ հարցեր են հետաքրքրում եւ պարզապէս մարդկանց հետաքրքրող հարցերը խլեցւում են եւ իրական մտահոգութիւնները չի արտացոլւում: Այս մասին «ԱԼԻՔ»-ի հետ զրոյցում յայտնեց բարձր տեխնոլոգիաների ոլորտի ինժեներ, հրապարակախօս Հրաչեայ Խաչատրեանը:*

*Անդրադառնալով տեղեկատւական բլոկադաները յաղթահարելու միջոցներին, Հրաչեայ Խաչատրեանը նշեց, որ իշխանական տեղեկատւական բլոկադան հնարաւոր է ջարդել ընդդիմադիր դաշտի գրագէտ աշխատանքի միջոցով, բայց արդէն 5 տարի է ընդդիմադիր դաշտը չի կարողանում կոնսոլիդացւել եւ այդ տեղեկատւական բլոկադայի դէմ աշխատել:*

*«Ցաւօք սրտի, ընդդիմադիր դաշտում ռեսուրսներին տիրապետողները չեն կարողանում արագ գիտելիքներ հաւաքել եւ մոդեռնիզացնել եւ համապատասխան հակադրութիւն ցոյց տալ: Ընդդիմութեան աշխատանքները ցոյց են տալիս, որ նրանք անընդհատ անյաջողութեան են հասնում իշխանութեան հետ աշխատանքների տարբեր ոլորտներում՝ է՛ւ հրապարակում, է՛ւ լրատւական դաշտում»,-նշեց նա:*

*Ինչ քայլերով է հնարաւոր տեղեկատւական դաշտը մոբիլիզացնել, որպէսզի ապագայում հնարաւոր դառնայ յաջողութիւնների հասնել, Հրաչեայ Խաչատրեանը նշեց, որ ամենակարեւորը մասնագէտների կարծիքը հարցնելն է, այսինքն ռեսուրսներին տիրապետողները անհրաժեշտ է կարողանան մասնագէտների կարծիքը հաշւի առնել եւ խորհրդատւութիւն ստանալ:*

*«Ես միշտ կարեւոր եմ համարել, միաժամանակ ճիշտ մասնագէտների աշխատանքին զուգահեռ, սեփական մասնագէտներ պատրաստելը, կրթութեան վրայ ռեսուրսներ չխնայելը, մոդեռնիզացիայի ուղղութեամբ ռեսուրսներ չխնայելը, այսինքն աշխատանքը, մոդեռնիզացիան եւ կրթութիւնը միշտ պէտք է զուգահեռ լինեն, իհարկէ, առաջին հայեացքից թւում է, թէ դրանք չստացւող ներդրումներ են, բայց համապատասխան դպրոցներ լինելուց յետոյ, շատ կարճ ժամանակում, ռեսուրսները*

(Շար. 2-րդ էջում)

*«Դաշնակցութիւնը քննադատութիւնից եւ պայքարից վախեցողը չէ: Բան ունէք ասելու՝ հրամեցէ՛ք: Բայց փաստ տւէք, միտք տւէք, տեսակէտ յայտնեցէք՝ եթէ ունէք, եւ պարկեշտ եղէք: Պարկեշտ թէ՛ ձեզ հետ, թէ՛ հակառակորդի վերաբերմամբ: Սուտը եւ հայհոյանքը տկարի զէնք են»,-*



*Սիմոն Վրացեան (1882-1969), Հայաստանի առաջին Հանրապետութեան վերջին վարչապետ, ՀՅԴ Բիւրոյի երկար տարիների անդամ*


ARAM® coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

Տաթեւիկ Հայրապետեան.

# «Ադրբեջանը տարածքային յաւակնութիւններ ունի ՀՀ-ի նկատմամբ. կատաղում է, երբ Իրանը աջակցում է»





ՀՀ տարածքային ամբողջականութեան եւ սահմանների անխախտելիութեան վերաբերեալ ՀՀ-ում Իրանի դեսպանի յայտարարութեան առթիւ ադրբեջանական կողմի բացասական ու անհամարժէք պատասխանները եւս մէկ անգամ փաստում են, որ Ադրբեջանն ունի ՀՀ-ի նկատմամբ տարածքային յաւակնութիւններ: Այդ մասին գրում է ադրբեջանագէտ Տաթեւիկ Հայրապետեանը:

«Ուստի ամէն անգամ կատաղում է, երբ այլ պետութիւնների, առաւել եւս Իրանի կողմից վերահաստատւում է ՀՀ տարածքային ամբողջականութեան անխախտելիութեան փաստը: Իրանը, ի տարբերութեան, շատ այլ երկրների, զուտ կոչեր ու յայտարարութիւններանող պետութիւն չէ, որի խօսքը կարելի լինի հեշտութեամբ անտեսել ու մարսել դա»,- գրել է ադրբեջանագէտը:

**«24News»**

Իրանագէտ.

# «Ոչ ոք եւ ոչինչ չի կարող ստիպել մեզ հրաժարուել Հայաստանի որեւէ սրբազան տարածքից»



Իրանագէտ Վարդան Ոսկանեանը գրում է.

«Արդեօ՞ք Հայաստանի Հանրապետութիւնը մեր Հայրենի՞քն է: Իհարկէ՛, ոչ մի կասկած չի եղել, չկայ եւ չի կարող լինել, որ դա այդպէս է:

Սակայն մեր պարագայում հայրենիքի լոկ քաղաքական ներկայիս ընկալումն է վերաբերելի Հայաստանի Հանրապետութեանը, որովհետեւ գոյութիւն ունի նաեւ քաղաքակրթական Հայաստանը՝ այն Հայաստանը, որի մի մասն է միայն Հայաստանի Հանրապետութիւնը:

Ոչ ոք եւ ոչինչ չի կարող ստիպել մեզ հրաժարուել, դիցուք, Ս. Մեսրոպ Մաշտոցի ծննդավայր Տարօնից, նրա ջանքով հայկական դպրոց դարձած Ամարասից, նրա լուսաւորչական առաքելութեան կենտրոն Գողթնից եւ մեր ազգի բնօրրան քաղաքակրթական Հայաստանի որեւէ այլ սրբազան տարածքից:

Սրբազան, քանզի այդ տարածքներում մինչեւ հիմա էլ ակնառու են մեր սուրբ նախնեաց անխոնջ քաղաքակրթական ոգու եւ ջանքի անջնջելի յիշատակները, որոնք ունեն միայն մէկ տէր՝ հայ ազգը եւ քաղաքակրթական Հայաստանի լոկ մէկ անկիւնում այդ ազգի ստեղծած վեհագոյն քաղաքական միաւորը՝ Հայաստանի Հանրապետութիւնը»:

**«24News»**

# Սեպտեմբերի 20-ից յետոյ ադրբեջանցիների առաջխաղացումը շարունակւում էր. հրետանին լռել էր, բայց պատերազմը չէր դադարել



Սեպտեմբերի 20-ին Արցախում հրետանին լռեց, բայց պատերազմը շարունակւում էր, որովհետեւ ադրբեջանական զօրքը շարունակում էր առաջխաղացումը: Արցախի վերջին պետնախարար Արթուր Յարութիւնեանը Արցախի հանրային հեռուստատեսութեանը տուած հարցազրոյցում ասաց, որ պատերազմի աւարտից 2 օր յետոյ է ադրբեջանական զօրքը փակել Ստեփանակերտը շրջաններին կապող համարեա բոլոր ճանապարհները:

Բայց արդեօք չկա՞ր պայմանաւորուածութիւն, որ հրադադարից յետոյ զօրքերը պէտք է մնային իրենց դիրքերում:

«Իհարկէ կար պայմանաւորուածութիւն, բայց էդ որ մի պայմանաւորուածութիւնն է ադրբեջանական կողմը կամ Ալիեւը պահել, որ այդ մէկը պահէր»,- «Oragir.News»-ի հետ զրոյցում ասաց ԱՀ ԱԺ «Արդարութիւն» խմբակցութեան պատգամաւոր Մետաքսէ Յակոբեանը:

Արցախցի պատգամաւորը նաեւ նշեց.

«Կար նաեւ պայմանաւորուածութիւն, որ բոլոր պայմանները պիտի ստեղծէին, որ մինչեւ յունուարի 1-ը մարդիկ կարողանան հանգիստ որոշում կայացնել՝ տեղափոխւում են Արցախից, թէ մնան Արցախում: Այդ պայմանաւորուածութիւններն էլ չպահպանեցին: Նկարեցին բանակցութիւնները, ադրբեջանական մամուլը տարածեց, որ Եւլախում հանդիպումներ են ունենում, բայց անգամ այդ պայմանաւորուածութիւնները նրանք չպահեցին: Այդ ամբողջ ներկայացումը, որ նրանք անում էին միջազգային հանրութեան համար, իրականութեանը չէր համապատասխանում: Իրականում իրենց զինւորը զինուած մտնում էր բնակավայրեր»:

Մետաքսէ Յակոբեանի համոզմամբ Արցախում խուճապ սկսուեց տարածուել հէնց հրադադարից յետոյ՝ ադրբեջանցիների առաջխաղացման ժամանակ: Իրավիճակի մասին Յակոբեանը փորձել է տեղեկացնել մարդկանց, բայց էլեկտրականութեան եւ կապի բացակայութեան պատճառով միշտ չէ, որ յաջողուել է.

«Սեպտեմբերի 22-ից սկսած խաթարուած էր կապը նաեւ գիւղերի միջեւ: Եւ ադրբեջանցի զինուորները ոչ միայն մատոյցներում էին, այլ նաեւ ներսում էին: Սեպտեմբերի 20-ին, ես հնարաւոր է ժամանակահատուածը մի փոքր խառնեմ, բայց ադրբեջանցի զինուորն արդէն Ստեփանակերտ քաղաքում էր: Ադրբեջանը փորձում էր արհեստական խուճապ տարածել եւ դա նրանց մօտ յաջողուեց: Մարդիկ արդէն շատ վատ հոգեվիճակում էին ու դու չգիտէիր, թէ որ վայրկեանին ադրբեջանցի զինւորը կը մտնի քո տուն, որտեղ քո երեխան է: Այստեղ նաեւ երեխային փրկելու բնազդն էր, որ բոլորի մօտ աշխատում էր: Խուճապն արդէն անկառավարելի էր»:

**«Aravot.am»**

## «Օրակարգը ....

(Շար. 1-ին էջից)

սկսում են էֆեկտիւ աշխատել եւ լրացուցիչ ռեսուրսներ ստեղծել»,-նշեց նա:

Խաչատրեանի խօսքով՝ ընդդիմադիր մեդիա դաշտը անընդհատ արձագանգում է իշխանական օրակարգին եւ ոչ թէ իր սեփական օրակարգն է ձեւաւորում, միասին ճիշտ աշխատանքի պարագայում, սեփական օրակարգի ձեւաւորումը կարող է նոր հարթութիւն ձեւաւորել, բայց այս պահին, ընդդիմադիր դաշտը միասնական օրակարգ չունի, այլ ընդամէնը հատուածական արձագանգում է իրենց պարտադրուած օրակարգին:

Անդրադառնալով ընդդիմադիր դաշտի միասնական օրակարգի ձեւաւորման քայլերին, Խաչատրեանը նշեց, որ յաղթանակի համար երկու բաղադրիչ է անհրաժեշտ ե՛ւ պաշտպանութիւն, ե՛ւ յարձակում, հետեւաբար ընդդիմադիր դաշտի միասնական օրակարգը պէտք է մոբիլիզացնող գործօն լինի եւ առաւելագոյնը մոբիլիզացնի ընդդիմադիր դաշտի սուբիեկտներին, եւ սեփական օրակարգը ստեղծելով կարողանայ Հայաստանի շահերին նպաստող օրակարգ առաջ քաշել եւ ոչ միայն ներքաղաքական եւ ներհասարակական կեանքում այլ միջազգային հարթակներում:

Խաչատրեանի խօսքով՝ Արցախը յետ բերելը կամ հայկական շահը հետեւանք են: Այսինքն Արցախը յետ կը բերե՞ն, թէ՝ ոչ կամ հայկական շահը աշխարհում կը կարողանա՞ն պաշտպանել, թէ՝ ոչ, այն ուժեղ Հայաստանի ուղիղ հետեւանք է լինելու: Հետեւաբար, օրակարգը այսօր պէտք է լինի ուժեղ եւ պաշտպանուած Հայաստանի կերտումը, ազգային օրակարգին ծառայող ուժերը, պէտք է ուժեղ Հայաստանի կերտման ուղղութեամբ աշխատեն, եւ կարողանան մարդկանց բացատրել, որ խաղաղութիւն, տարածաշրջանում եւ ընդհանրապէս Հայաստանի շահերին սպասարկումը միայն հնարաւոր է ուժեղ Հայաստանի դէպքում:

**ՍԻՒՆԷ ՖԱՐՄԱՆԵԱՆ**

Տիրան Խաչատրեան.

# «Անբարոյականութիւն է ասել, թէ նախկին զէնքերը ժանգոտած էին»



Իրաւունք չունենք անկլաւները յանձնել, նրանք Հայաստանի տարածքն են, պէտք է հանրաքուէի դրուի, ժողովուրդը որոշի, դա Սահմանադրութեան խախտում է: Բացի այդ, անկլաւները տալով հարցը չի փակուելու, նոր պահանջներ է դրուելու, արդէն խօսում են «Արեւմտեան Ադրբեջանի մասին»: Այս մասին «24TV»-ի հաղորդման ժամանակ ասաց ՀՀ ԶՈՒ ԳՇ պետի նախկին առաջին տեղակալ, գեներալ-լէյտենանտ Տիրան Խաչատրեանը:

Անդրադառնալով նոր գնուած զէնքերին Խաչատրեանը նշեց, որ կիրառման մէջ չի տեսել, բայց տեղեակ է, որ շատ զէնքեր զօրային փորձարկում չեն անցել, գնուած զինատեսակներ էլ կան, որ տուեալ երկիրը իր սպառազինութիւնում չի ներառել, եթէ արդիւնաւէտութեան բարձր մակարդակ ունեն, ինչո՞ւ իրենց բանակում չի ներառուել:

Անդրադառնալով նախկինում «պիպետկով» զէնք տրամադրելու ՀՀ ԱԳ նախարարի յայտարարութեանը Խաչատրեանը նշեց, որ իր համար վիրաւորական է գործից չհասկացող մարդկանց մեկնաբանելը.

«Իր խելքի բանը չէ, չգիտի ԶՈւ-ն ինչ է, սպառազինութեան համակարգը ինչ կիրառութիւն ունի, վեր է կացել, ասում է՝ նախկինում «պիպետկով» են տալիս: Գնուած զէնքերը եթէ համեմատենք, ՌԴ զէնքերն աւելի բարձր էին, 80-ականի զէնքեր կան, որ կարող են մրցել նաեւ ԱՄՆ-ի հետ, անբարոյական մօտեցում է, թէ ժանգոտած զէնքեր են եղել»:

Դիտարկմանը, թէ Արցախի կորստի համար մեղադրում են նաեւ զինւորականներին, ասում են, եթէ չհանդուրժէին, Արցախի մնացած հատուածը կը պահպանէր, Խաչատրեանն ասաց՝ իսկ ինչ էին մեզանից պահանջում, յեղաշրջո՞ւմ, զինւորականներից ռազմական յեղաշրջում պահանջողները յետոյ իրենց ազգի դաւաճան էին համարելու, որ լեգիտիմ իշխանութեան դէմ են գնացել:

Խօսելով Արցախի սեպտեմբերի 19-ի պատերազմի մասին եւ Հայաստանի կողմից չմիջամտելու հանգամանքին՝ Խաչատրեանն ասաց, որ շատ հասկացող զինւորականները դէմ էին Արցախի պատերազմին Հայաստանի չմիջամտելուն, բայց ինչ կարող էին անել. «Գործող բանակի զինւորականները ցաւը սրտերում ասում էին՝ ախր մեր զինակիցները կռւում են, մենք այստեղ ենք»:

Հարցին, թէ պատերազմի օրերին Ազգային հերոսի կոչում էք ստացել, արդեօք վերցրե՞լ էք, գեներալ-լէյտենանտը նշեց, որ կոչումը չի վերցրել, քանի որ յանձնելու կարգը չի պահուել:

Դիտարկմանը, թէ «Ազգային հերոսի» կոչում ստացած որոշ գործիչներ հիմա կալանաւորուած են, Խաչատրեանը պատասխանեց.

«Սողացող արարածից պահանջում էք, որ թռչի՞, սրբութիւն չունեցողից ի՞նչ էք պահանջում, հերոսներին կալանաւորելը ինչպէ՞ս բացատրենք: Մենք հերոսներ չպէտք է ունենանք, իշխանութեանը ձեռնտու չէ, պէտք է լինեն դեֆորմացուած, սկզբունքներ չունեցող արարածներ, որ աթոռներին պինդ մնան»:

Էդուարդ Շարմազանով.

# «2018-ին ատելութեան քարոզով իշխանութեան եկածներն ու հայհոյանքներ տարածողներն այսօր «Ֆէյսբուք»-եան գրառումների համար մարդ բռնել են տալիս»



Էդուարդ Շարմազանովը գրում է.

Խելքի աշեցէք…

Հայաստանում թեւածում է անամօթութեան ու բարոյազրկման ուրուականը:

Քասը, անամօթութիւնն ու ստախօսութիւնը մթագնել են շատերի ուղեղները:

Սերժ «մերժողները» եկել անամօթաբար ՀՀԿ-ին մեղադրում են Նիկոլին իշխանութիւնը տալու համար:

2018-ին ատելութեան քարոզով իշխանութեան եկածներն ու հայհոյանքներ տարածողներն այսօր «Ֆէյսբուք»-եան գրառումների համար մարդ բռնել են տալիս:

Հերոս Ռոբերտ Աբաջեանի կեղծ պապին հարթակ բարձրացնողները բարոյականութեան քարոզիչ են դարձել:

Արցախն Ադրբեջանի կազմում ճանաչող նիկոլիստները պետականութիւնից են խօսում:

Մահ ու պատերազմ բերողները խօսում են խաղաղութիւնից:

Ու սա կեղծիքի ու ստի, լկտիութեան ու բարոյազրկման փաստերի ընդամէնը մի փոքր մասն է…

Իսկ հասարակութիւնը կարծես թէ անհաղորդ է այս ամենին:

Մինչեւ մենք, որպէս հասարակութիւն չմերժենք նիկոլիզմի ու նիկոլիզմին սնող ստերի շղթան, մենք յայտնուելու ենք պետականութիւն ու հայրենիք կորցրածների շարքում:

Յ. Գ. - Ազնիւ մարդը անարգւում է գէշի հետ,

Երիւարը լուծ է քաշում էշի հետ.

Երկու տարւայ հորթը ցուլ-գոմէշի հետ

Բերել կամ են լծել, խելքի՛ աշեցէք:

Ջիւանի»:

**«168.am»**



# «Խաղաղութեան խաչմերուկ»-ի հատող ճանապարհներին կրկին խաչելու է հայի ազգային շահն ու արժանապատուութիւնը

***Աշոտեանի յօդուածը՝ «Նուբարաշէն» ՔԿՀ-ից***

***ՀՀԿ փոխնախագահ Արմէն Աշոտեանը հերթական յօդուածն է հրապարակել «Նուբարաշէն» ՔԿՀ-ից: Այն ներկայացնում ենք ստորեւ.***

*«Հերթական նոյեմբերի 9-ը առիթ է ստեղծում վերլուծելու 44-օրեայ պատերազմի աւարտն արձանագրող փաստաթղթի ազդեցութիւնն ու հետեւանքները մեզ վրայ:*

*Ուղիղ 3 տարի առաջ հայ ժողովրդի համար շոկային էր եռակողմ յայտարարութեան բովանդակութիւնը, եւ Սերժ Սարգսեանի դիպուկ ձեւակերպմամբ հայկական կողմից այն ստորագրող անձին ամուր կպաւ «կապիտուլիանտ» բնորոշումը:*

*Միայն այն փաստը, որ նոյեմբերի 9-ով աւելի շատ տարածքներ ենք կորցրել, քան 44-օրեայի ողջ ընթացքում, բաւարար էր ընկալելու համար աղէտի մասշտաբները:*

*Սակայն, երբ մեզ թւաց, որ սա է հայկական աշխարհի վերջը, հետագայ 3 տարիներին Հայաստանի իշխող վարչախմբի ապիկար եւ նպատակային քայլերի հետեւանքով պարզ դարձաւ, որ աղէտի վերջը դեռ չի երեւում, քանի դեռ վերացած չեն այս արհաւիրքի պատճառները:*

*Երեք տարիների ընթացքում իրավիճակն այնքան վատթարացաւ, որ «էս ի՞նչ ես ստորագրել» զայրոյթը փոխակերպուեց «գոնէ ստորագրածդ պահի՛ր» պահանջով:*

*Ամիսներ առաջ Փաշինեանը ցինիկաբար յայտարարեց, որ ընդդիմութեան պատճառով կեանքի չեն կոչել նոյեմբերի 9-ի յայտարարութեան «հայանպաստ» դրոյթները:*

*Այսօրուայ ճգնաժամից յետհայեացք նետելով՝ ստորագրման պահին կար ընդամէնը մի քանի «հայանպաստ» դրոյթ: Նախ պահպանւում էր Լաչինի միջանցքի գոյութիւնը եւ ֆունկցիոնալութիւնը: Անցեալ տարուանից Ադրբեջանը Հայաստանի իշխանութիւնների թողտուութեամբ քայլեր ձեռնարկեց այս միջանցքը վերացնելու ուղղութեամբ եւ յաջողեց: Միւս, մեր շահերին համահունչ դրոյթը ռազմագերիների փոխանակումն էր, սակայն առ այսօր մօտ 100 մեր հայրենակիցներ շարունակում են գտնուել ադրբեջանական բանտերում, եւ Փաշինեանը մատը մատին չի տուել այս խնդիրը վերջնական լուծելու համար:*

*Անշուշտ, յուսադրող էր այն փաստը, որ սոյն յայտարարութիւնը չէր անդրադառնում Արցախի կարգավիճակին՝ բաց թողնելով հնարաւորութիւնների պատուհանը՝ շարունակել պայքարն Արցախի ժողովրդի ինքնորոշման իրաւունքի միջազգային ճանաչման եւ երաշխաւորման համար: Փաշինեանի կողմից նշաձողի իջեցումը յանգեցրեց Պրագայի չարաբաստիկ յայտարարութեանը, որով հիմքեր ստեղծուեցին Ադրբեջանի սեպտեմբերեան ագրեսիայի համար:*

*Դրական էր նաեւ Ռուսաստանի Դաշնութեան միջնորդական դերակատարութիւնը եւ խաղաղապահ առաքելութեան տեղակայումն Արցախում, ինչը, ցաւօք, այս տարիների ընթացքում չծառայեց լիարժէքօրէն իր նպատակներին բուռն գեոպոլիտիկ խաղերի հետեւանքով:*

*Ինչպէս տեսնում ենք, նոյեմբերի 9-ի յայտարարութեամբ հայկական կողմերի համար առկայ եզակի շահեկան հնարաւորութիւնները յօդս ցնդեցին ոչ թէ ընդդիմութեան, այլ Նիկոլ Փաշինեանի պատճառով:*

*Արդիւնքում, Ադրբեջանը մաքսիմալ քամեց այս եռակողմ յայտարարութիւնն իր օգտին՝ լկտիաբար խախտելով դրա դրոյթները: Հայաստանի իշխող վարչախումբն անցաւ Արցախը յանձնելու երկրորդ՝ յետպատերազմեան փուլին եւ ձեռքերը լուաց եռակողմից՝ յանուն արեւմտեան գեոպոլիտիկ կազինոներում իրենց դրած դրոյքի: Իսկ Ռուսաստանը «գլուխս խառն է», «Նիկոլն է մեղաւոր», «հայից աւելի հայ չենք լինելու» մօտեցումներով՝ Հարաւային Կովկասի եւ գլոբալ դասաւորութիւններում, բնականաբար, հետապնդում է բացառապէս սեփական շահերը:*

*Նիկոլի իշխանութեան, Ռուսաստանի եւ Ադրբեջանի շահերի համար վճարեց հայ ժողովուրդը:*

*«Խաղաղութեան խաչմերուկ»-ի հատող ճանապարհներին կրկին խաչելու է հայի ազգային շահն ու արժանապատուութիւնը, եթէ Փաշինեանի անփառունակ իշխանութիւնը մեր ժողովրդի հաւաքական կամքով չաւարտուի: Ուստի 2021 թ. յունիսի 21-ն աւելի խայտառակ օր է մեր պատմութեան մէջ, քան անգամ 2020 թ. նոյեմբերի 9-ը»,- գրել է Աշոտեանը:*



Արթուր Խաչիկեան.

# «Մարդկութեան պատմութեան մէջ չկայ նման բան, որ պետութեան ղեկավարն ասի՝ իր պետութեան տարածքի չափի մասին իմացել է հանրագիտարանից»

***«Պրեսինգ» հաղորդաշարում Սաթիկ Սէյրանեանը հիւրընկալել էր ԱՄՆ Սթենֆորդի համալսարանի քաղաքագիտութեան դոկտոր Արթուր Խաչիկեանին:***

***Հարցազրոյցի հիմնական թեզերը՝ ստորեւ.***

*• Նոյեմբերի 9-ի եռակողմ պայմանագիրն այլեւս գոյութիւն չունի, եւ դրա գլխաւոր մեղաւորներից մէկը ՀՀ իշխանութիւնն է, ով Պրագայում Արցախը յայտարարեց Ադրբեջանի մաս:*

*• Այս իշխանութիւնները 5 տարի է՝ խօսում են ինքնիշխանութեան մասին, բայց մենք հիմա բացարձակապէս ինքնիշխան չենք: Մեր փոխարէն ուրիշ պետութիւններն են որոշումներ կայացնում:*

*• Այս իշխանութիւնն ամէն ինչ արեց, որ Ռուսաստանի հետ յարաբերութիւնները վատանան, ու Մոսկւայում պրոադրբեջանական լաբբին կարողանայ համոզել ռուսներին, որ հայերի հետ գործ ունենալն անիմաստ է, ու պէտք է պայմանաւորուել թուրքերի հետ:*

*• Մարդկութեան պատմութեան մէջ չկայ նման բան, որ պետութեան ղեկավարը ասի՝ իր պետութեան տարածքի չափի մասին իմացել է հանրագիտարանից:*

*• Եթէ չկուտակենք իրական ուժային պոտենցիալ ու չպայմանաւորուենք մեր իրական դաշնակիցների հետ, Հայաստանի հետ լինելու է նոյնը, ինչ Արցախի հետ:*

*• Ֆրանսիան, ԱՄՆ-ը չընդունեցին, որ Արցախում եղել է էթնիկ զտում: Քաղաքակիրթ աշխարհը, ինչպէս 100, 150 տարի առաջ, հիմա էլ չի ուզում դա տեսնել, որովհետեւ շահ չունի մեզնից: Մենք անյոյս ենք. այս նոյն երեխայական մօտեցումներով՝ որ Ֆրանսիան, Անգլիան մեզ կը պաշտպանեն, մենք մորթուեցինք 100 տարի, 150 տարի առաջ:*

*• Ֆրանսիան մեզ տրամադրելու է 3 ռադար, որը կարելի է 15-20 րոպէում ոչնչացնել: Սրանք Ֆրանսիայի կողմից ընդամէնը խորհրդանշական՝ սիմուոլիկ քայլեր են, ժեստ, Ֆրանսիայի հայ համայնքը հանգստացնելու միջոց: Այդ մասին, ի դէպ, գրել է ֆրանսիական «Le Mond» թերթը, ոչ թէ մեր իշխանական քարոզիչները, որոնք դրա համար փող են ստանում: Ֆրանսիական մամուլում դաւաճաններին անւանում են սեպարատիստներ, Արցախի էթնիկ զտումը՝ դրամա:*

*• Տեսէք, թէ ինչ գին վճարեց Ուկրաինայի ժողովուրդն այն բանի համար, որ դարձաւ խաղաքարտ Ռուսաստան-Արեւմուտք պատերազմում: Այդ պատերազմում արդէն 500.000 ուկրաինացի է զոհւել: Հիմա, երբ Արեւմուտքի փողը պրծաւ, յետ քաշւեցին, ուկրաինացիներն էլ պրծան: Ուկրաինայում տղամարդ չի մնացել, արդէն կանանց են տանում պատերազմ… Սրա հետեւանքները 50 տարի յետոյ էլ կը զգան:*

*• Փաշինեանը թատրոնով է հարցեր լուծում: Երբ չես հասկանում՝ աշխարհն ինչպէս է աշխատում, քեզ թւում է՝ ձեւեր թափելով, թատրոն բեմադրելով՝ կը հասնես ուզածիդ: Այդ մարդու համար կարեւոր է իշխանութիւն պահելը, այդ թատրոնում Հայաստանի ղեկավարի դեր խաղալը:*

*• Սա հայ ժողովրդի ներկայացուցիչ չի: Հայ ժողովրդի ներկայացուցիչն Արեւմուտքի ղեկավարների հետ սեղան չի նստի, հարցեր չի քննարկի, նրանց հետ, ովքեր չեն ընդունում, որ Արցախում 120000 մարդ էթնիկ զտման է ենթարկւել: Դէ թող մեր*

**(Շար. 6-րդ էջում)**

ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՐԺԱՆԻ

# Գերի տարածներու առեղծուածը

*Աւելի քան մէկ ու կէս ամիս անցած է այն օրերէն, երբ Արցախի վերջին տարածքներուն խլումէն ետք, արցախցիներու բռնագաղթին զուգահեռ տասնեակ մը քաղաքական եւ զինուորական ղեկավարներ, որոնց կարգին նախկին նախագահները, գերեվարուեցան դէպի Բաքու եւ մինչեւ օրս բանտարկուած կը մնան ալիեւեան խուցերու մէջ:*

*Անարգանք պիտի ըլլայ, անշուշտ, չյիշատակել նախապէս նոյն ճակատագրին ենթարկուած այլ արցախահայերը, սկսելով 44-օրեայ պատերազմի օրերէն, ապա՝ նոյեմբերեան ու հետեւող համաձայնագրէն ետք:*

*Յստակ չէ ճիշտ թիւը հայ առեւանգեալներուն ու բանտարկեալներուն, եւ սա աւելի՛ ղժնդակ կացութիւն կը ստեղծէ, յատկապէս երբ օրին, նախքան Արցախի անկումը (իմանալ՝ յանձնումը) ՀՀ վարչապետ Փաշինեան հպանցիկ կերպով՝ կը խօսէր անոնց թիւին մասին՝ «պլիւս-մինիւս» արտայայտութեամբ, կարծէք թէ գերեվարուածները մարդկային արարածներ ու հայրենիքի պաշտպանութեան համար մարտնչողներ չըլլային, եւ ատիկա եղաւ առաջին աղաղակող ապացոյցը, թէ այս մարդուն համար, հարցը հրատապ չէ: Հետեւանքներէն մէկը եղաւ այն, որ ադրբեջանական «հերոսութիւնները» շարունակուեցան եւ այսօր, Բաքուի մէջ կազմըւած է արգելափակուածներու «փոքր գաղութ» մը:*



*Հակառակ տարածուած կիսատպռատ լուրերուն, ցարդ յստակ չէ, թէ ի՞նչ պայմաններու մէջ կ'ապրին այս բանտարկեալները:*

*Յստակ օրէնքներ գոյութիւն ունին, որոնք որդեգրուած են ինքզինք քաղաքակիրթ կոչող աշխարհին կողմէ, յստակեցնելու համար, թէ ինչպիսի՞ պայմաններ պէտք է ստեղծել պատերազմական գերիներու համար:*

*1907-ին, Լահէի (Հոլանդիա, այժմ՝ Նիդեռլանդներ) մէջ բանաձեւուած՝ պատերազմի օրէնքներուն լայնածաւալ թղթածրարին մէջ, մանրամասնութեամբ ներկայացուած են պատերազմի ժամանակ գերեվարուած եւ բանտարկուած անհատի մը իրաւունքները. յստակ պայմաններ արձանագրըւած են բանտարկեալին եւ արգելափակողին պարտաւորութիւններուն մասին:*

*Ազգամիջեան յարաբերութիւններուն մէջ, ընդունուած բառ մըն է POW-ն (prisoners of war): Պատերազմական գերիներու մասին սկզբնական օրէնքները ժամանակի ընթացքին զարգացում ապրեցան եւ մշակուեցան Ժնեւի մէջ գոյացած յատուկ գիտաժողովներու ժամանակ:*

*Հանրածանօթ են Ժնեւի 1949-ի համագումարին որդեգրուած բանաձեւերն ու կանոնները, որոնց մէջ յստակօրէն կը նշուին, թէ բանտարկեալը պէտք է յարգուի եւ անոր հանդէպ վերաբերմունքը ըլլայ մարդկային: Նաեւ՝ ան կարելիութիւն պէտք է ունենայ հետեւողականօրէն կապ հաստատելու Կարմիր Խաչին եւ իր հարազատներուն հետ: Անոր համար նաեւ կարելիութիւն պէտք է ստեղծուի նամակցելու, եւ ապրանք առաքելու իր պարագաներուն: Սնունդ եւ բժշկական խնամք ստանալու կողքին, ան երբեք պէտք չէ կատարէ տաժանակիր աշխատանք եւ անշուշտ, ի վերջոյ պէտք է, որ ազատ արձակուի երբ խնդրոյ առարկայ պատերազմը աւարտի:*

*Արդեօք 19 Բաղրամեանի վարձակալները քաջատեղեա՞կ են այս մանրամասնութիւններուն: Արդեօք անոնք կարդացա՞ծ են Ժնեւի համագումարէն բխած բանտարկեալներու օրէնքները, թէ՞ (ան)գիտութիւնը հոս ալ զիրենք կը դնէ այլ տեսակի մրցանիշ հաստատելու վազքուղիին մէջ: Փաստը այն է, որ Արցախէն ձեռք լուացած ըլլալու բազում փաստերէն ետք, ահաւասիկ նոր ապացոյց մըն ալ կաւելնայ թաւշեահիւսներուն «հանճարե՛ղ» դիւանագիտութեան վրայ:*

*Բնականաբար չենք կրնար արհամարհել մեդալին միւս երեսը: Վերջին տարիներուն, Ադրբեջան նոյնինքն պատերազմներու եւ ճակատումներու պահուն, ու անոնցմէ ետք, հետեւողականօրէն ցոյց տուած է, թէ միջազգային օրէնքներ ու մարդկային նկատառումներ չունին իր ոճրային տրամաբանութեան հետ, աւելի՛ն, պատրաստ չէ յարգելու որեւէ համաձայնագիր կամ պայման, որուն տակ կը դնէ իր ստորագրութիւնը: Ուրեմն, գերիներու հարցը իրեն համար մանր դրամի մը արժէքն իսկ չունի: Ողբերգութեան մէկ ահաւոր երեսն ալ այն է, որ Ադրբեջանի այս վարքագիծը ոչինչ կըսէ «Բաղրամեանցիներուն», որոնք կը շարունակեն վազել խաղաղութեան կրկներեւոյթի մը յետեւէն, եւ ազգն ալ վարակել այդ անիրականալի իրականութեամբ:*

*Ինչ որ տեսանելի է եւ վէճի նիւթ չի կրնար ըլլալ, այն է, որ ղեկը իւրացնողները ո՛չ միայն կը թերանան, այլ հագած են անփութութեան եւ թշնամիին հաճոյանալու գեղեցկագոյն պատմուճանները, իսկ անդին, նախկին նախագահներ եւ պատասխանատուներ, հարիւրաւոր գերիներ կը մնան արգելափակուած, անմեղ տարեց մըն ալ 15 տարի բանտարկութեան վճիռ կը ստանայ, ինչ որ ուրախանալու ո՛չ մէկ նշոյլ կը բերէ:*

*…Ու մեր ժողովուրդը ինքզինք նետած է անտարբերութեան ալիքներու մէջ, կը հաշտուի իշխանաւորներու բոլոր այլանդակութիւններուն եւ ազգավնաս, հայրենավնաս քայլերուն հետ, որոնք պետութիւնը ենթակայ կը դարձնեն մաս-մաս բնաջնջուելու վտանգներու:*

**«Հայրենիք», Բոստոն**

**Խմբագրական**



# Տագնապները դիմագրաւե՛նք միասնաբար

## Արամ Ա Վեհափառ Հայրապետը դասախօսութիւն է կարդացել ԱՄՆ-ում

Ն.Ս.Օ.Ս.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը դասախօսութիւն մը տուաւ «Ջորջ Վաշինգտոն» համալսարանին մէջ՝ խորագրեալ «Կրօնքը Միջին Արեւելքի աշխարհաքաղաքական յարաբերութիւններու ծիրէն ներս»: Այս մասին յայտնում են Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսարանից:

Առաջին հերթին, Նորին Սրբութիւնը ընդհանուր գիծերով ներկայացուց ներկայ աշխարհին մէջ հետզհետէ աճող կրօնքին ներկայութիւնը ընկերութեան կեանքէն ներս եւ անոր ունեցած ազդեցութիւնը աշխարհաքաղաքական յարաբերութիւններու մէջ: Ան ըսաւ, որ հին դարերէն սկսեալ կրօնքը ազդու ներկայութիւն դարձած է ազգերու կեանքի զանազան մարզերու մէջ: Այսօր եւս, կարելի չէ բաժանման գիծեր հաստատել կրօնքին եւ ընդհանրապէս ընկերութեան կեանքին միջեւ: Վեհափառ Հայրապետը նաեւ յայտնեց, որ կրօնքին դերը երբեմն եղած է ոչ-դրական, հակառակ իր բարոյական արժէքներու ուսուցման, որովհետեւ ան շահագործուած է քաղաքական կառոյցներու ու գաղափարախօսական վարդապետութիւններու կողմէ:

Ընդհանուր ակնարկէ ետք, Նորին Սուրբ Օծութիւնը իր խօսքը կեդրոնացուց միաստուածեան երեք կրօններուն վրայ եւ յատկապէս անդրադարձաւ հետեւեալ կէտերուն.-

Ա) Հաւատքի ու բանականութեան փոխյարաբերութիւն: Հայրապետը այս ծիրէն ներս նշեց, թէ ճիշտ չէ հաւատքը հեռացնել բանականութենէն, որովհետեւ ան կրնայ սխալ ուղղութեան առաջնորդել հաւատացեալը, միաժամանակ ճիշտ չէ հաւատքը ամբողջութեամբ բանականութեան սահմաններուն մէջ պահել: Հետեւաբար, բանականութիւնն ու հաւատքը զիրար ամբողջացնող յարաբերութիւն պէտք է ունենան, որովհետեւ զանոնք իրարմէ հեռացնելը կրնայ լուրջ անպատեհութիւններ յառաջացնել:

Բ) Կրօնք եւ քաղաքականութիւն: Ասոնք տարբեր իրականութիւններ են, սակայն՝ սերտօրէն իրարու առնչուած: Կրօնքը պէտք չէ քաղաքական օրակարգերու ու կառոյցներու հետ նոյնացնել, միաժամանակ կրօնքը կարելի չէ ապաքաղաքականացնել, որովհետեւ քաղաքական օրակարգի մաս կազմող հարցերը՝ արդարութիւնը, խաղաղութիւնը, կենսոլորտը եւ այլն, նաեւ կրօնական տարածքներ ունին, եւ, հետեւաբար, անոնք անհրաժեշտ է, որ քննարկւին կրօնքին կողմէ:

Գ) Կրօնքը միացուցիչ ու բաժանարար դեր ունի: Այս երեւոյթը առնչուած չէ կրօնքին ինքնութեան ու առաքելութեան, այլ՝ ոչ-կրօնական կառոյցներու կողմէ անոր շահագործումին: Հետեւաբար, յաճախ ինքզինք հակասութեան մէջ տեսնող կրօնքը անհրաժեշտ է զգոյշ ըլլայ՝ կառչած մնալով իր ուսուցումներուն եւ արժէքներու համակարգին:



Ապա, Նորին Սրբութիւնը անցնելով իր դասախօսութեան երկրորդ բաժինին, անդրադարձաւ հետեւեալ կէտերուն, մասնաւորաբար Միջին Արեւելքի շրջագծէն ներս.-

1) Փոխադարձ վստահութիւն: Ան ըսաւ, թէ Միջին Արեւելքի դիմագրաւած տագնապները մեծ չափով արդիւնք են փոխադարձ վստահութեան պակասին: «Երբ ինքզինքս կը նկատեմ հողին տէրը, որուն վրայ կ'ապրիմ եւ իմ դրացիս՝ իբրեւ գրաւողը այդ նոյն հողին, սա կը նշանակէ, որ դրացիիս ներկայութիւնը սպառնալիք է ինծի համար եւ՝ փոխադարձաբար»: Դժբախտաբար, այս կացութեան խորացման մէջ կրօնքին դերը եղած է բացասական: Ինչպէ՞ս կարելի է, որ միաստուածեան կրօնները, միասնական ճիգով եւ իրենց ունեցած հաւաքական արժէքներու լոյսին տակ, կարենան վստահութիւն ստեղծել նոյն հողին վրայ ապրող ժողովուրդներուն միջեւ:

2) Աշխատիլ արդարութեան վրայ հիմնուած խաղաղութեան համար: Խաղաղութիւնը եւ արդարութիւնը Աստուածատուր իրաւունքներ են, եւ, հետեւաբար, անոնք կրօնքի առաքելութեան մաս կը կազմեն: Կարելի չէ խաղաղութիւնը պարտադրել. կարելի է զայն հաստատել արդարութեան հիման վրայ: Կրօնքին դերը այս ուղղութեամբ էական է:

3) Աշխատիլ ի խնդիր ժողովրդավարական կարգերու հաստատման: Միջին Արեւելքի ընկերութիւններէն ներս ժողովրդավարական սկզբունքները այնքան ալ ընդունելի չեն եղած: Ոմանք կը կարծեն այդ սկզբունքներու հաստատումով կրնան ծայրայեղականները իշխանութիւնը ձեռք ձգել. ուրիշները կը կարծեն, թէ ժողովրդավարական կարգերը կրնան զսպել ծայրայեղական գաղափարախօսութիւններու տարածումը. տակաւին, ոմանք կը կարծեն, թէ ժողովրդավարական սկզբունքները արեւմուտքի մաս կը կազմեն: Անհրաժեշտ է, որ ժողովրդավարական արժէքները համապատասխանեն Միջին Արեւելքի իւրայատուկ իրականութիւններուն ու ըմբռնումներուն, այլապէս կրնան հակառակ արդիւնքը ունենալ:

4) Պայքար արմատական շարժումներուն դէմ: Միաստուածեան կրօններու ուսուցումները կը դատապարտեն արմատական շարժումները, որոնք կը չարափոխեն կրօնքին ուսուցումները՝ զանոնք նոյնացնելով իրենց քաղաքական օրակարգերուն հետ: Հետեւաբար, երեք կրօնները միացեալ ճիգերով անհրաժեշտ է, որ ամրապնդեն իրենց հետեւորդներու կեանքին մէջ փոխադարձ յարգանքը ու վստահութիւնը:

5) Տագնապները դիմագրաւել միասնաբար: Այս ուղղութեամբ հրամայական է երեք կրօններուն հասարակաց արժէքները դարձնել չափանիշ մտածելակերպի, գործելակերպի ու կենցաղակերպի, մերժելով այնպիսի մօտեցումներ, որոնք կրնան տագնապներ յառաջացնել ընկերութեան կեանքէն ներս:

Վերոյիշեալ կէտերուն շուրջ Վեհափառ Հայրապետը լայնօրէն անդրադարձաւ՝ յաճախ օրինակներ տալով եւ միշտ շեշտելով նոյն արմատները ունեցող միաստուածեան երեք կրօններուն միջեւ գործակցութեան հրամայականը:

Իր դասախօսութեան վերջաբանին մէջ, Նորին Սրբութիւնը ըսաւ, թէ եբրայական, քրիստոնէական ու իսլամական կրօններու ներկայացուցիչները իրարու կը հանդիպին միջ-կրօնական հաւաքներու ընթացքին Միջին Արեւելքէն դուրս. ինչո՞ւ անոնք պիտի չհանդիպին Երուսաղէմի մէջ, ուր ունին իրենց սրբազան կեդրոնները. ինչո՞ւ խորհրդանշական նշանակութիւն ունեցող Երուսաղէմի մէջ հանդիպելով եւ հաւաքական յայտարարութիւն կատարելով պիտի չվերանորոգեն հաւաքական արժէքներու ու սկզբունքներու հանդէպ իրենց հաւատարմութիւնը: Ահա՛ մարտահրաւէրը անոնց դիմաց: Արդեօք քաջութիւնը, իմաստութիւնը եւ յանձնարարութիւնը ունի՞ն միաստուածեան երեք կրօնները նոր էջ մը բանալու Միջին Արեւելքի պատմութեան մէջ, ամբողջական խաղաղութեան ուղղութեան առաջին գործնական քայլը առնելով:

Յայտնենք, որ դասախօսութեան բացումը եւ փակումը կատարեց համալսարանի միջազգային օրէնքի բաժանմունքի պատասխանատու դոկտ. Արամ Գաւուրը: Ան ներկայացուց Վեհափառ Հայրապետին ունեցած դերը միջեկեղեցական ու միջկրօնական ծիրէն ներս ու անոր ակադեմական խորքը ու գործունէութիւնը: Դասախօսութեան սրահը լեցուն էր. ներկայ էին համալսարանի դասախօսներ, պետական կառոյցներու առնչուած անձեր եւ դեսպանատուներու ներկայացուցիչներ:

«24News»

Արցախի թեմի առաջնորդ.

# «Ադրբեջանը կը փորձի վերացնել Արցախի եկեղեցիները կամ էլ ներկայացնել՝ որպէս աղւանական»

Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը վստահ է՝ օկուպացուած Արցախի հայկական եկեղեցիները, վանքերն ու խաչքարերը Ադրբեջանը փորձելու է վերացնել կամ էլ դրանք ներկայացնել որպէս այսպէս կոչուած աղւանական:



«Արցախից դուրս գալուց առաջ՝ դիմեցի ռուս խաղաղապահներին, խնդրեցի, որ գոնէ այնքան ժամանակ, ինչքան իրենք կը մնան Արցախում, վանքերը, եկեղեցիներն ու խաչքարերն անվտանգ լինեն: Մտավախութիւն ունէի, որ ադրբեջանցիները պղծելու են դրանք, ինչպէս պայթեցրեցին օրինակ՝ Մեխակաւանի Զօրաւոր Սուրբ Աստուածածինը: Ռուս խաղաղապահներից նամակ ստացայ, որ իրենք դիմել են Ադրբեջանի ներքին գործերի նախարարին, որն էլ հաւաստիացրել է, թէ դրանք ոստիկաններով կը պատեն, որպէսզի հսկեն դրանց անվտանգութիւնը:

Անշուշտ, դրանք զուտ խօսքեր են, մենք դրանց չենք հաւատում: Ինչ արել են նախկինում, նոյնն էլ շարունակելու են հիմա, դրանք կը վերածեն կամ մզկիթի, կամ այլ գործառոյթների համար կօգտագործեն, կամ էլ աղւանաուղիական եկեղեցիների վերածեն դրանք, որովհետեւ էդպիսի ծրագիր ունեն, նրանք պնդում են, թէ այդ եկեղեցիներն ու վանքերը պատմականօրէն պատկանում են աղւան ժողովրդին եւ հայերն են, որ դրանք հայկականացրել են»,- «Alpha Newsroom»-ի եթերում ասաց Արցախի թեմի առաջնորդը:

Նրա խօսքով՝ Արցախի պատմամշակութային ժառանգութեան պատմութիւնը Ադրբեջանը փորձել է խեղաթիւրել դեռ Խորհրդային Միութեան ժամանակ:

«Հայաստանի Արեւելագիտութեան ինստիտուտի գիտաշխատողները պայքարում էին Բաքւի ներկայացուցիչների հետ, որոնք Մոսկւայում փորձում էին հայկական եկեղեցիները ներկայացնել որպէս աղւանական: Փառք ու պատիւ մեր գիտնականներին, որ կարողացան հասանելի դարձնել ճշմարտութիւնը: Այս խնդիրը, սակայն, հասաւ նաեւ մեր օրեր: 44-օրեայ պատերազմից յետոյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու Ամենայն Հայոց կաթողիկոսի ջանքերի շնորհիւ՝ մեր ներկայութիւնը շարունակեցինք ապահովել Դադիվանքում: Առաջին անգամ, սակայն, մենք տեսանք ուդիների այցը Դադիվանք, նրանց տարազը, խօսքը, պահւածքը չէր համապատասխանում մեր ընկալումներին, մենք չէինք պատկերացնում, թէ որ եկեղեցին են նրանք ներկայացնում: Ես նոյնիսկ հանդիպեցի նրանց հետ, բացատրեցի, թէ ինչպէս է ձեւաւորւել աղւանական եկեղեցին ու ասացի, թէ ինչ գործ ունեն հիմա, որ եկել են Դադիվանք: Բայց նրանք նպատակ ունէին մտնել Արցախ, առաջինը հէնց Դադիվանքն էր»,- ասաց Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանը:

Սրբազան Հօր խօսքով՝ Հայաստանը պէտք է աշխատանքներ տանի, որպէսզի աշխարհին ապացուցի, որ Ադրբեջանը խեղաթիւրում է պատմութիւնը:

Հարցին, թէ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը աշխատանքներ տանո՞ւմ է ուղղափառ եւ կաթոլիկ եկեղեցիների հետ, որպէսզի նրանք էլ իրենց աջակցութեամբ փորձեն պահպանել հայկական եկեղեցիները օկուպացուած Արցախում, Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանն ասաց.

«Այո, նման աշխատանքներ իրականացւում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Աւելին՝ 44-օրեայ պատերազմից յետոյ Արցախի պատմամշակութային յուշարձանների պահպանման գրասենեակ բացւեց, որն աշխատանքներ է տանում, որպէսզի թէ՛ եկեղեցական, թէ՛ քաղաքացիական միջազգային կառոյցներում հայկական եկեղեցու նկատմամբ ոտնձգութիւնները ի չիք դարձւեն: Հէնց Վեհափառի եւ ռուս ուղղափառ եկեղեցու պատրիարքի միջոցով Դադիվանքը կարողացանք այդքան երկար ժամանակ հայկական պահել, այնտեղ ռուս խաղաղապահներ տեղակայւեցին: Եկեղեցիների համաշխարհային խորհուրդը, ինչպէս նաեւ Կաթոլիկ եկեղեցու պետը դատապարտել են այդ երեւոյթները, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն ամէն ինչ անում է, որպէսզի այդ աշխատանքները լիարժէք հասցնի այդ կառոյցներին»,- յաւելեց Արցախի թեմի առաջնորդը:

«Alphanews.am»



Հայկ Նահապետեան.

# «Ալիեւը Սերժ Սարգսեանի օրօք չէր յարձակուի, գիտէր՝ դիմացը հարբեցող խեղկատակ չէ»

2018 թուականի մայիսին Հայաստանում նոր քաղաքական ուժի իշխանութեան գալու պահից ակնյայտ դարձաւ, որ Ղարաբաղը յանձնելու է, բայց մենք չէինք ենթադրում, որ դա տեղի կունենայ այնպէս, ինչպէս տեղի ունեցաւ: Այս մասին «News.am»-ի թղթակցի հետ զրոյցում ասել է ռուս քաղաքագէտ, Մերձաւոր Արեւելքի եւ Կովկասի հիմնախնդիրների փորձագէտ Ստանիսլաւ Տարասովը:

Քաղաքագէտն ընդգծել է, որ Ալիեւը Սերժ Սարգսեանի օրօք չէր համարձակուի պատերազմի գնալ:

«Սերժ Սարգսեանի ռեժիմի դրական եւ բացասական կողմերի մասին թող հայերը դատեն, բայց Հայաստանի նախկին ղեկավարութիւնը շատ փորձառու եւ ուժեղ էր: Ինչ վերաբերում է Հայաստանի գործող իշխանութեանը, ապա մենք գործ ունենք փորձառութեան պակաս ունեցող դեմագոգների հետ: Հայաստանի իշխանութիւնները ժողովրդի շահերը ձմերուկի կամ սպանախի պէս վաճառքի հանեցին եւ, ի վերջոյ, կորցրին ե՛ւ տարածքներ, ե՛ւ մարդկային կեանքեր: Ինչո՞ւ դա արուեց, երբ այս հարցը կարելի էր այլ կերպ լուծել»,- ասել է նա:

«168 TV-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում ռազմական փորձագէտ Հայկ Նահապետեանը, վերահաստատելով Տարասովի տեսակէտը՝ ընդգծեց.

«Չէր յանդգնի, որովհետեւ հրաշալի գիտէր՝ այն ժամանակ իր առաջ կանգնածը խեղկատակ հարբեցող չէ, սակայն 2018 թուականի մայիսից Հայաստանի քաղաքացիներն իշխանութեան բերեցին մի խեղկատակ հարբեցողի՝ իր դիլետանտների խմբի հետ: Այնպէս որ, մենք այս իշխանութեան հետ շարունակելու ենք ունենալ կորուստներ, եւ թող Հայաստանի քաղաքացիները դրա համար որեւէ մէկին, բացի այս իշխանութիւնից, չմեղադրեն: Կորուստներ լինելու են, որովհետեւ Թուրքիան եւ Ադրբեջանը Հայաստանը ցանկանում են տեսնել 9700 քառակուսի կիլոմետրով՝ որպէս մի թուրքական քարւանսարա»,- ասաց Նահապետեանը եւ յիշեցրեց, թէեւ նախկինում ՄԱԿ ԱԽ չորս բանաձեւ է եղել՝ յօգուտ Ադրբեջանի, սակայն այն ժամանակւայ Հայաստանի իշխանութեան վարած հայանպաստ քաղաքականութեան արդիւնքում դրանք այդպէս էլ չեն կատարուել, եւ հայկական զօրքը չի հեռացել Արցախից, ինչը կատարուեց Փաշինեանի իշխանութեան օրօք:

Ըստ Նահապետեանի՝ հայկական զօրքը կարողացել է կանգնած լինել Արցախում, որովհետեւ Հայաստանի նախորդ իշխանութիւնները կարողացել են ռազմավարական մակարդակի յարաբերութիւններ ունենալ Ռուսաստանի հետ, ստանալ զէնք՝ ներքին գներով, միեւնոյն ժամանակ՝ ՆԱՏՕ-ի անդամ երկրների հետ կնքել զէնք գնելու վերաբերեալ պայմանագրեր:

«Նախորդ իշխանութիւնները, ունենալով Ռուսաստանի հետ ռազմավարական համագործակցութեան պայմանագրեր, կարողացել են նաեւ ՆԱՏՕ անդամ երկրներից զէնք գնել: Դա Ռուսաստանի մօտ խանդ չի առաջացրել, աւելին, Ռուսաստանը շարունակել է Հայաստանին զէնք վաճառել՝ գործարանային գներով: Հիմա Հայաստանը Ֆրանսիայի հետ կնքել է ընդամէնը զէնքի գնման ցանկութիւնների յուշագիր, եւ մենք տեսնում ենք Ռուսաստանից եկող արձագանգները: Հայաստանը Ֆրանսիայից զէնք է գնում՝ ենթարկուելով Արեւմուտքի պահանջներին»,- ասաց Նահապետեանը:

Ռազմական փորձագէտի կարծիքով՝ Արեւմուտքի կողմից թելադրուած գործողութիւն էր նաեւ 2018 թուականին իշխանութեան եկածների կողմից այն պայմանագրերի չեղարկումը, որոնցով Հայաստանը մի քանի հարիւր դոլարի զէնք էր գնելու Ռուսաստանից՝ ինքնարժէքով եւ Ռուսաստանի տուած վարկով:

«Փաշինեանը 2018 թուականին իշխանութեան գալուց անմիջապէս յետոյ չեղարկել է Սերժ Սարգսեանի օրօք ստորագրուած զէնքի գնման պայմանագրերը, ըստ որոնց, ռուսական վարկով էլ պէտք է Հայաստանը զէնք գնէր ՌԴ-ից՝ ինքնարժէքով. մի քանի հարիւր միլիոն դոլարի զէնք պէտք է գնէր, սակայն Փաշինեանը հէնց այդ պայմանագրերը չեղարկեց, ինչը մեր պետութեանը կանգնեցրեց ծանրագոյն հետեւանքների առաջ»,- խօսքը եզրափակեց Նահապետեանը:



# Այս իշխանութիւնն արմատախիլ է անում այն, ինչ կապւած է Արցախի հետ, պետականութիւնը թաղում են, որ նորից չյառնի

Այն, ինչ կատարուել է Արցախում եւ այսօր կատարւում է Հայաստանում, կանխամտածւած պայմանաւորուածութիւններ էին, որոնք ձեռք են բերուել առաջինը՝ Պրագայում՝ եռակողմ հանդիպման ժամանակ, եւ երկրորդը՝ Բրիւսէլում:

«168TV»-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում ասաց Արցախի Հանրապետութեան ԱԺ երեք գումարման պատգամաւոր, Ասկերանի նախկին քաղաքապետ Ալեօշա Գաբրիէլեանը:

Ըստ Ալեօշա Գաբրիէլեանի՝ սեպտեմբերի 19-20-ին Արցախի դէմ Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողութիւններից տեղեակ են եղել ՀՀ իշխանութիւնները, ոչ միայն Նիկոլ Փաշինեանը, այլեւ իշխող խմբակը, դրա մասին խօսել է նաեւ Թուրքիայի նախագահը: Արցախցի երեք գումարման պատգամաւորի կարծիքով՝ դրան տեղեակ է եղել նաեւ Արցախի նախկին նախագահ Արայիկ Յարութիւնեանը, որը մեծ կապեր է ունեցել Փաշինեանի հետ:

«Ի սկզբանէ մեզ թւացել է, որ եթէ ռուս խաղաղապահ ուժերը ներկայ են այնտեղ, այդքան խորութեամբ չէին գնայ դրան, ինչ-որ տեղ էլ նրանք մեզ պէտք է պաշտպանէին, որպէսզի դուրս չգայինք: Սակայն ամէն ինչ կանխորոշւած էր, կարծում եմ՝ տարածաշրջանի երկրների համաձայնութեամբ, նկատի ունեմ՝ Ռուսաստանի, Հայաստանի, Թուրքիայի եւ Ադրբեջանի:

Պատերազմը հանրութեան համար անըսպասելի էր, կէսօրին մօտ սկսւեց եւ իր ինտենսիւութեամբ աւելին էր, քան 44-օրեայ պատերազմի նախօրէին, երբ նախնական պատրաստութիւն կար ու հարւածում էին մեր մարտական դիրքերին: Այս անգամ լաւ նախապատրաստուել էին, Ասկերանում էի բնակւում, ամէն ինչ մեր գլխավերեւով՝ թռնում էր, թշնամին լաւ ռեզերւ ունէր՝ նախապատրաստւած յատուկ նշանակութեան ջոկատներով: Չէինք սպասում նման զարգացումների, մեր տղաներն իսկապէս արիաբար կռւում էին, բնականաբար, զոհեր կային: Արցախի իշխանութիւնը տեսնում էր, որ պատերազմն անհաւասարաչափ ուժերով է ընթանում, ժողովուրդն անպաշտպան է, վերջաբանը եղաւ այն, ինչ եղաւ»,- նշեց Ալեօշա Գաբրիէլեանը:

Նա յիշեցրեց՝ այն պայմանաւորուածութիւնները, որոնք Արցախի ու Ադրբեջանի ներկայացուցիչները ձեռք էին բերել պատերազմին նախորդող ժամանակահատւածում՝ Եւլախում տեղի ունեցած առաջին հանդիպման ժամանակ, Ադրբեջանը յետոյ խախտեց: Ադրբեջանն իր համար տակտիկական զէնք էր վերցրել այն, որ Արցախից պէտք է արցախահայութեանը հանեն, բայց ոչ ամբողջութեամբ:

«Ադրբեջանն իր հաշւարկներում սխալուել է, պայմանաւորուածութիւնն այն էր, որ մերոնք ամբողջովին զինաթափւում են, յանձնում են զէնքը, իսկ թուրքերը վերադառնում են իրենց ելման դիրքեր: Իրենք ոչ թէ վերադարձան իրենց ելման դիրքեր, այլ գրաւեցին կարեւորագոյն հանգուցային կէտեր: Կոնկրետ Ասկերանի ուղղութեամբ եկել էին եւ Ասկերան-Նախիջեւանի ճանապարհին անմիջապէս մօտ կանգնած էին, դրօշը տընկած վերահսկում էին, անզէն աչքով մենք նրանց տեսնում էինք: Աւելի սարսափելին այն էր, որ Մարտակերտի ու Մարտունիի շրջաններում նրանք նաեւ մտան գիւղերը: Սկսուել էր խառնաշփոթ վիճակ, որեւէ մէկն իրաւունք չունէր ժողովրդին մեղադրել, եթէ հաշւի առնենք այն զոհերը, որոնք ունեցանք քաղաքացիական անձանց շրջանում: Թուրքը գործում էր այնպէս, ինչպէս միշտ գործում էր դարի սկզբից մինչեւ այսօր, դրա համար բոլոր շրջաններից բնակիչները հաւաքւեցին մեր «պաշտպանների» յենակէտի

(Շար. 6-րդ էջում)



Յուսիկ Արա.

# «Եթէ այսպէս շարունակւեց՝ վաղը բոլորս բեռներս հաւաքած՝ լքելու ենք Հայաստանը»

Հինգ տարւայ ընթացքում կարողացան հասարակութեանը հասցնել այս հոգեբանական վիճակին: Եթէ հինգ տարի առաջ որեւէ մէկն ասէր, որ Արցախը յանձնելու են, կամ կորուստներ ենք ունենալու՝ բոլորը տեղներից ցատկելով պայթելու էին, այդ ասողին խելագար էին անւանելու, ծաղրելու էին: Սակայն այսօր տեսնում ենք, որ բոլորը համակերպւել ու հաշտուել են: Այս մասին «168TV»-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում ասաց բանաստեղծ Յուսիկ Արան՝ խօսելով Արցախի կորստից յետոյ հասարակութեան համակերպւած վիճակի մասին:

Նրա դիտարկմամբ՝ երբ սկսում են մարդուն քայլ առ քայլ ունեզրկել, մարդն աստիճանաբար հաշտւում է իր կորստի հետ:

Բանաստեղծը վստահ է՝ այն, ինչ կատարւեց Արցախի հետ, կատարուելու է նաեւ Հայաստանի հետ: Ադրբեջանն այսօր մօտ 200 քառակուսի կիլոմետր տարածք է օկուպացրել ՀՀ տարածքից՝ ռազմավարական նշանակութեան բարձունքներ:

Հետեւաբար, ըստ նրա՝ Արցախի կորստի ու այս ամէնի հետ չհամաձայնելու համար հայ հասարակութիւնը պէտք է իրեն գոնէ պահէր հրեաների նման:

«Հրեաներն այսօր Նեթանիահուին չեն ներում նրա համար, որ մէկ օր Պաղեստինը ռմբակոծել է Իսրայէլի տարածքը: Եթէ անգամ նա Պաղեստինը քարտէզից ջնջի, միեւնոյն է՝ Իսրայէլի ժողովուրդը նրան չի ներելու, որովհետեւ մէկ օր Իսրայէլը ռմբակոծել է: Սա է ազգը, ժողովուրդը, որ պետութիւն ունի ու պահելու է:

Եթէ այսպէս շարունակւեց՝ վաղը բոլորս բեռներս հաւաքած՝ լքելու ենք Հայաստանը:

Հասարակութիւնը ե՛ւ չի գիտակցում իրեն սպառնացող վտանգները, ե՛ւ թքած ունի: Նախորդ տարի Փաշինեանն Արցախը ճանաչեց Ադրբեջանի կազմում, մէկ տարի չանցած ունեցանք հայաթափւած Արցախ: Ալիեւն աշխարհին ասաց՝ Հայաստանի ղեկավարը ճանաչել է իմ տարածքը, ես էլ գործողութիւններ եմ կատարում: Հիմա էլ ասում է՝ Ադրբեջան, 8 գիւղ քոնն է, վաղը ռազմական գործողութիւններ է անելու, եւ աշխարհը չի կարող ասել՝ Ալիեւ, ի՞նչ ես անում, որովհետեւ Փաշինեանն ասել է՝ դրանք քոնն են:

Իբրեւ խաղաղութեան դարաշրջանն աւարտեց՝ Արցախը յանձնելով, հիմա էլ խաղաղութեան խաչմերուկ է ասում, վերջում էլ կասի՝ խաղաղութեան աշտարակ, ու կը յանձնի Երեւանը»,- նշեց Յուսիկ Արան:

Ըստ նրա, հասարակութեանն ամէն օր քարոզւում է, որ պէտք է զիջել, հասարակութիւն, որը գտնւում է նւաստացւած վիճակում, իսկ այդ նւաստացման ամենավառ օրինակը Ադրբեջանի կողմից առեւանգւած եւ 15 տարւայ ազատազրկման դատապարտւած Վագիֆ Խաչատրեանի դատավարութիւնն էր:

«Իսկ այդ ֆոնին ադրբեջանցիները Բաքւի դատարանում բղաւում են, թէ հայերն այդ ինչ վատն են եղել, նման բան է ասում մի ազգ, որը 1988 թուականին Սումգայիթում 16 տարեկան հայ աղջկան փողոցում մորթում ու խորոված է անում: Դիմէք Լարիսա Ալավերդեանին, նա ձեզ բոլոր փաստերը ցոյց կը տայ: Ադրբեջանցիները, Ալիեւը հայաֆոբ են: Վաղը սկսւելու է Արցախի նախկին նախագահների աւելի նւաստացնող դատավարութիւնը, իսկ մենք անտարբեր ենք, կարծես թէ այդ ամէնը մեզ հետ կապ չունեցող է: Չեմ ասում՝ ժողովրդի 100 տոկոսն այդպէս է, բայց հիմնական մասը կարծես թէ ասում է՝ ինձանից հեռացնեմ, իբր ինձ հետ կապ չունի:

Եթէ կորցնում ես հայրենիքդ, կորցնում ես տունդ, այդ դէպքում չես կարող պետութիւն ունենալ: Մի սերունդ եկաւ, ամէն ինչ սարքեց ու ձեռքները տւեց, բայց կորցրեցին, եթէ հիմա էլ փրկենք, 5-10 տարի յետոյ նորից կորցնելու են: Մեր գէնի մէջ չկայ պետութիւն պահել, հայրենիքը զգալ, ոչինչ չկայ: Այսօրւայ մեղաւորն էլ ենք մենք, այն ժողովուրդը, որը չի ուզում սպանել՝ չի սպանւում:

Եկէք չնեղանանք՝ հասկանանք՝ ով ենք, գոնէ դրանից յետոյ գիտակցենք: Կարծում էք՝ Սիւնիքը հետաքրքրո՞ւմ է ժողովրդին, միայն սիւնեցուն է հետաքրքրում, Արցախը հայաթափւում էր, այստեղ մարդիկ խորոված սարքելով եւ ուտելով օր էին անցկացնում: Նման ժողովրդին ոչ միայն մարդկութիւնն է պատժում, այլեւ Աստւած:

Միայն ազգային մտածելակերպով առաջնորդւելը կարող է արդիւնք ունենալ, այսինքն՝ ինքնութեան գիտակցումն է, եթէ դրանից հեռացան, ուղղակի չեն կարող գոյատեւել: Մենք մեր առաջին դպրոցը տւեցինք թուրքին՝ ապրելու իրաւունք ունե՞նք, թէ՞ ոչ, թող ժողովուրդը որոշի՝ իր գոյութիւնն արդարացւա՞ծ է: Վաղն Ալիեւը մեր երեք նախագահներին է տանելու, Նիկոլին էլ՝ որպէս ծաղրածու»,- ընդգծեց Յուսիկ Արան:



Գառնիկ Դաւթեան.

# «Ալիեւը սպասում է Նիկոլի «խոշոր ձախողում», Նիկոլին մնում է՝ Ադրբեջանի դրօշը ճակատին ամրացնի ու ասի՝ ես իրենց բարեկամն եմ, ու վերջ»

Եթէ «ժողովրդավարութեան բաստիոնում» դիտարկում ենք Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը, ապա դա զուտ ծաղրածուների իշխանութեան հերթական կրկէսի հանդէսն է: Քաղաքացիների նկատմամբ քրէական հետապնդումները մէկ նպատակ ունեն՝ լռեցնել Հայաստանում տարբեր բնագաւառներում գործող փորձագէտներին ու քաղաքական գործիչներին, որոնք պարբերաբար միշտ ահազանգել են վերահաս վտանգների ու աղէտների մասին, որոնք, ցաւօք, իրականացել են:

«168TV»-ի «Ռեւիւ» հաղորդաշարի եթերում խօսելով ժողովրդավարութեան բաստիոն հռչակւած Հայաստանում քաղաքացիներին «Ֆէյսբուք»-եան գրառման համար քրէական պատասխանատուութեան ենթարկելու՝ իշխանութիւնների նպատակների մասին, ասաց Ադրբեջանի հարցերով փորձագէտ Գառնիկ Դաւթեանը:

Ըստ նրա, որքան Նիկոլ Փաշինեանը կուրծք է ծեծում, թէ Հայաստանը ժողովրդավարական երկիր է, նոյնքան էլ ժողովրդավարական կարող է լինել Ադրբեջանը, քանի որ այնտեղ կալանաւորում ու քրէական հետապնդման են ենթարկում ընդդիմադիր քաղաքական գործիչներին, ինչպէս հիմա անում են Հայաստանում:

«Իրականում այս քրէական գործերը, որոնք յարուցում են մեր նկատմամբ, մեզ մոտիւացնում են, ինչո՞ւ, որովհետեւ լիարժէք տիրապետում ես իրաւական ոլորտին, գիտես՝ ինչ ես անում ու ինչու ես անում: Այդ շարքից էր իմ ակցիան, որը պլանաւորւած էր, ես գիտէի, թէ ինչ եմ անում: Եթէ իմ իրաւունքներն այսպէս պէտք է ոտնակոխւի եւ կեղծ վարչական վարոյթ յարուցեն, ապա դա ինձ աւելի մոտիւացնում է: Միեւնոյն է, եթէ նոյնիսկ մենք դատւենք, ապացուցում ենք, որ ՀՀ իշխանութիւնը երկիրը տանում է աղէտի եւ Հայաստանում մեր գործունէութիւնը ճիշտ ուղու վրայ է:

Սա բռնապետական երկիր է, այս մարդկանց մօտ միակ մեթոդը, որն աշխատում է՝ ասֆալտին փռելն է, բանտարկելը, մարդկանց վրայ կեղծ գործեր յարուցելը: Եթէ աքսոր լինէր, համոզւած եմ՝ նրանք այդ մարդկանց կաքսորէին»,- նշեց Գառնիկ Դաւթեանը:

Փորձագէտի բնորոշմամբ՝ Հայաստանի իշխանութիւնն այնքան աղէտ է բերել Հայաստանի գլխին, որ եթէ նոյնիսկ ցանկանան էլ, չեն կարողանայ կանխել Ադրբեջանի կողմից Հայաստանին սպառնացող վտանգները:

«Այս իշխանութեան մօտ աղէտ բերելն է լաւ աշխատում, զիջելը, կզելը, այսինքն՝ պատւազուրկ բաները, քան հայրենիքի համար պայքարելը, բանակաշինութիւն իրականացնելը եւ այլն: Ադրբեջանական կողմն այս ամէնը լաւ է հաշւի առնում, ինչպէս կորոնավիրուսի ժամանակ, այնպէս էլ պատերազմի, արդիւնքը նոյնն էր, սխալ էր ամէն ինչ կառավարւում: Պատերազմը վարողը՝ վարող չէր, իրեն մոդերատոր էր անւանում, յետոյ էլ ասում էր, թէ բոլորը մեղաւոր են, բացի իրենից:

Այսօր Ադրբեջանի միակ նպատակը Հայաստանի ոչնչացումն է: Հիմա Ալիեւը սպասում է Նիկոլի «խոշոր ձախողում»՝ մեծ ձախողմանը, որն իրեն լաւ լեգիտիմութիւն կը տայ, թէպէտ պատերազմ սկսելու լեգիտիմութիւն տերմին՝ որպէս այդպիսին, չկայ»,- շեշտեց նա:

Թէ որտե՞ղ պէտք է տեղի ունենայ այդ ձախողումը, Գառնիկ Դաւթեանը պատասխանեց, որ Նիկոլ Փաշինեանը խօսում է «անկլաւների» մասին, եւ հէնց նա է այդ թեման առաջ բերել:

Փորձագէտի կարծիքով՝ մեծ պրոցեսը, որի համար Ադրբեջանը կը գնայ ռազմական գործողութիւնների, «անկլաւներն» են լինելու:

«Նիկոլ Փաշինեանը 2022 թւականին Պրագայում եւ դրանից յետոյ ստորագրեց այնպիսի փաստաթղթեր, որով ճանաչում է Ադրբեջանի կոնկրետ տարածքային ամբողջականութիւնը: Նիկոլի հետ կայ կոնկրետ աշխատանք, պայմանաւորւածութիւն, եւ տարածքը հէնց այնպէս չեն վերցնելու, պէտք է պատերազմ լինի, թէ չէ չի գժւել այդ տարածքները հէնց այնպէս յանձնել, յատկապէս, որ այնտեղ մարդիկ են ապրում»,- ընդգծեց Գառնիկ Դաւթեանը:

Խօսելով խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ սկզբունքներից, փորձագէտն ասաց, որ Ադրբեջանը խօսում է ադրբեջանցի փախստականների վերադարձի մասին, որ 100 հազար մարդ պէտք է գայ ու բնակւի Հայաստանում:

«Խաղաղութեան պայմանագրի վերաբերեալ սկզբունքների առումով, կարծում եմ՝ այս պահի դրութեամբ ամենամեծ խնդիրը հէնց սա է եւ դեմարկացիայի ու դելիմիտացիայի համատեքստում «անկլաւների» հարցը: Ինչ վերաբերում է Արծւաշէնին ու այլ հայկական տարածքներին, Ադրբեջանը դրանք մեզ չի տալու, ho Ադրբեջանում Նիկոլ չի՞ նստած, որ հոդեր տայ:

Նիկոլին մնում է Ադրբեջանի դրօշը թղթով ճակատին ամրացնի ու ասի՝ ես իրենց լաւագոյն բարեկամն եմ ու վերջ»,- ընդգծեց Ադրբեջանի հարցերով փորձագէտ Գառնիկ Դաւթեանը:

Ռազմիկ Պետրոսեան.

# «Վոլկովի տեղակալը եկել է Արցախի ԿԳԲ, ասել է՝ զէնքերը յանձնէք մեզ, դուք արդէն ենթարկւում էք Ռուսաստանին, որ կարողանանք ձեզ պաշտպանել ու խաբել են»



ՀՀ Գերագոյն խորհրդի նախկին պատգամաւոր Ռազմիկ Պետրոսեանը, որը 1990-95 թթ. Արցախից ընտրւած տասնեակ պատգամաւորներից մէկն էր, կապոյտ անձնագրով, որն այսօր կառավարութիւնը համարում է ճամբորդական, այլ ոչ թէ ՀՀ քաղաքացիութիւնը հաւաստող փաստաթուղթ, մասնակցել է ՀՀ օրէնքների ընդունմանը, ՀՀ-ում սահմանադրականութեան տարբեր դրսեւորումների հաստատմանը:

«Aravot.am»-ը նրանից հետաքրքրւեց՝ այդ ինչպէս է ՀՀ քաղաքացիութիւն չունենալով հանդերձ, ճամբորդական անձնագրով պատգամաւորական գործունէութիւն իրականացրել ՀՀ-ում:

«Իմ անձնագիրը էդ կապոյտ անձնագիրն է եղել, այս հոկտեմբերի 27-ին ես նորից անձնագիր եմ ստացել, էլի նոյն անձնագրից են տւել: Ես փոխգնդապետի կոչում եմ ստացել այդ տարիներին, որը ՀՀ Գերագոյն խորհուրդն է ուղարկել, Հայաստանի բանակը, հիմա ես ՀՀ քաղաքացի չե՞մ: Չեմ իմանում՝ ինչ են ուզում, բայց ես չեմ ընդունում այս ամէնը: Էս ամէն ինչը գալիս է ամենամեծ սխալից, դա այն է եղել, որ անկախութիւն են հռչակել, դրա համար ենք պարտւել: Եթէ Ղարաբաղն ու ՀՀ-ն վերամիաւորւած լինէին, թուրքը մեզ չէր յաղթի, սրա համար ՀՀ նախկին բոլոր ղեկավարներն էլ են մեղաւոր, մենք վերամիաւորման համար ենք պայքարել: Ի՞նչ անկախութիւն, շարժումը եղաւ, որ վերամիաւորւենք Հայաստանի հետ: Դեկտեմբերի որոշումն ինչու ենք ընդունել, որ իսկապէս միանանք եւ միացել ենք, 16 պատգամաւոր են ընտրել Արցախից, բա որ քաղաքացի չենք եղել, ո՞նց են ընտրել: Ես 1989-ից հաշւում եմ, որ Ղարաբաղը ՀՀ հետ է միաւորւած, հիմա չեմ հասկանում՝ էս ինչ որոշում է՝ ՀՀ քաղաքացիութիւն ստանալու համար դիմում ներկայացնել»,-ասաց Ռազմիկ Պետրոսեանը:

Նախկին պատգամաւորը վստահեցնում է, որ Արցախը ռուսներն են ծախել. «Ղարաբաղը ռուսն է ծախել: Սեպտեմբերի 19-ին Ադրբեջանը յարձակւել է Ղարաբաղի վրայ, էդ յարձակման ժամանակ, ռուսն է կանգնեցրել կռիւը: Վոլկովի (խմբ. Արցախում Ռուսաստանի խաղաղապահ ուժերի հրամանատար, գեներալ-մայոր Անդրէյ Վոլկովի) տեղակալը եկել է Արցախի ԱԱԾ, որտեղ բոլոր փաստաթղթերն այրում էին, ասել է՝ զէնքերը յանձնէք մեզ, դուք արդէն ենթարկւում էք Ռուսաստանին, որ կարողանանք ձեզ պաշտպանել: Այդպիսի բան է եղել, գիտէ՞ք: Խաբել են, դրա համար մեր ղեկավարներին էլ են բռնել, հազիւ ենք կարողացել դուրս պրծնել:

Ինձ էլ էին ուզում բռնել, չկարողացան, ես ուրիշ անձնագրով եմ եկել: Ռուսներն են սաղ կազմակերպել ու յանձնել Արցախը, թէ ինչ նպատակ են ունեցել, չեմ իմանում: Թէ չէ այդքան զէնքը կարե՞լի էր յանձնել: 1988-ից պայքարում էինք, զէնք էինք հայթայթում, պահում էինք Ղարաբաղը, թուրքերը չէին կարողանում մտնել, էս ոնց եղաւ, որ սաղ զէնքը յանձնեցին: 100 տանկ կը յանձնե՞ն, 160 արկ կը յանձնե՞ն: Էս սաղ դաւաճանութիւն է:

Շահրամանեանը շատ թոյլ մարդ է, նա ոչ մի բան չի կարող անել, նրան ասել են սէնց, սէնց: Նա ի՞նչ իրաւունք ունի Ղարաբաղը լուծարի, նա այդքան խելք ունի՞ Ղարաբաղը լուծարի: Հայաստանի իշխանութիւններն էլ են մեղաւոր, Ղարաբաղի իշխանութիւններն էլ: Մի երկու տարուց յետոյ, որ Փաշինեանը չլինի, մենք էլի մտնելու ենք Ղարաբաղ: Փաշինեանը ժամանակաւոր մարդ է, մի անգամ մի բան է ասում, յետոյ երկու անգամ խօսքը փոխում, ես նրան չեմ հաւատում, ինքը չլինի, Ղարաբաղ ենք մտնելու նորից, ես դա մենակ գիտեմ: Այս փուլում շատ սխալներ է անում շատ, ամէն անգամ մի բան է ասում»:

## «Մարդկութեան ...

(Շար. 3-րդ էջից)

զոհւած երեխաների, խոշտանգւած զինուորների, տարեց մարդկանց՝ բահերով սպանութիւնների լուսանկարները հետը տանի, Արեւմուտքում, Ֆրանսիայում ցոյց տայ՝ Եւրոպական խորհրդարաններում…

(Յիշեցնենք, որ Նիկոլ Փաշինեանը, նրա կինը եւ ՔՊ-ականները 2019 թ. ապրիլին՝ ԵԽԽՎ-ում, ապա յունիսին՝ Միաւորւած ազգերի կազմակերպութեան (ՄԱԿ) Ժնեւեան գրասենեակում բացել էին հայկական թաւշեայ յեղափոխութեան նկարների ցուցահանդէսը,- հեղ.):

• Այս իշխանութիւններն Արեւմուտքի գործակալներն են, հլու-հնազանդ կատարում են նրանց ասածը: Եւ այն, որ ԱՄՆ դեսպանը ՀՀ իշխանութիւններին համարում է դեմոկրատիայի փարոս, այս իշխանութիւնների մատուցած ծառայութիւնների գինն է:

• Իսրայէլի վարչապետ Բենիամին Նաթանիահուն օրեր առաջ մերժել է հրադադարի կոչերը՝ «առանց ՀԱՄԱՍ-ի կողմից հոկտեմբերի 7-ի յարձակումների ժամանակ պատանդների ազատ արձակման»: Մեր ռազմագերիներն Ադրբեջանի բանտերում են, Փաշինեանը 2021 թ. արտահերթ խորհրդարանական ընտրութիւնների քարոզարշաւի ժամանակ ասում էր՝ «Գերիները մեզ կը ներեն մի ամիս, երկու ամիս աւել Բաքւի բանտում գերութեան մէջ մնալու համար»:

Դուք պատկերացնո՞ւմ էք, որ Նաթանիահուն ասէր՝ Իսրայէլից տեղահանւած 120000 հրեաների թեմայի հետ իրենք գործ չունեն, թող Ամերիկան գայ ու պաշտպանի… Սա խելագարութիւն է:

• Իսրայէլին բառերով չեն կերակրում, տալիս են իրական հնարաւորութիւններ՝ արաբներին հնձելու համար:

• Գուցէ մեր դիւանագէտների փոխարէն շինարարները գնան, բանակցեն. նրանց հաստատ չեն կարողանայ խաբել:

• Թող մի Ազգային ժողով կամ աւելի ճիշտ՝ ախոռ էլ ստեղծեն, եւս մէկը, ուր այնպիսի բառեր կասեն, որ բարձրաձայնելու չի, դրանից ոչինչ չի փոխւի:

• Շատ շուտով թուրքերը Սիւնիքը մեր ձեռքից կառնեն, Իրանի հետ կապը կը կտրեն, ու բոլորս կը գնանք «Green Card» կը խաղանք, որ փախչենք այստեղից… Երկու տարի առաջ ենք դեռեւս ասել, որ Արցախը յանձնելով՝ այս ամէնը չի կանգնելու:

• Տաւուշի մարզի գիւղերի բնակիչները, որոնք Փաշինեանը պատրաստւում է յանձնել, ո՞ւմ օգտին էին քւէարկել ընտրութիւններում: Ես նրանց շատ յարգում եմ, բայց նրա՞նք չէին, որ ասում էին՝ Փաշինեանն ասֆալտ է փռել, դէ թող այդ ասֆալտով վազեն Սաղախլօ…

## Այս...

(Շար. 5-րդ էջից)

մօտ՝ Իւանեանում: Մարդիկ օգնութեան, պաշտպանւելու կարիք ունէին, ռուս խաղաղապահները ոչինչ չձեռնարկեցին»,- շեշտեց Ալեօշա Գաբրիէլեանը:

Նրա բնորոշմամբ՝ Արցախում Ադրբեջանի ղեկավարութիւնն իրականացրել է ցեղասպանութիւն, դրա վերաբերեալ բազմաթիւ մարդիկ ունեն յստակ փաստեր: Մարդկանց բռնի տեղահանել են իրենց բնօրրանից:

«Նոյնիսկ կասէի, որ Ասկերանի շրջանում տեղի ունեցած պայթիւնը կրկին ծրագրաւորւած էր՝ խուճապ առաջացնելու համար:

Արցախի իշխանութիւնը որոշել էր բնակչութեանը պահել Արցախում, այսինքն՝ մեզ մեր բնօրրանից չկտրել, դժւարութիւնները յաղթահարելով՝ մնանք, բայց ամէն ինչ այնպէս կազմակերպւեց, եւ այնպիսի խուճապ սկսւեց, որ որեւէ իշխանութիւն չէր կարող դրա դէմն առնել: Մարդիկ մի կտոր բենզին էին փնտրում, որ թողնէին դուրս գային: Այդ ամէնը պետական մակարդակով կազմակերպւած ցեղասպանութիւն էր, եւ դրա մեղաւորները միայն Ադրբեջանի ղեկավարութիւնը չէր, այլեւ այն մարդիկ, ովքեր ստեղծել էին այս իրավիճակը, ովքեր պայմանաւորւել են, որ Արցախն այս ճանապարհով պիտի տան: Ինձ համար, գիտէ՞ք, որն է զարմանալին, երբ Ադրբեջանի ԱԳ նախարարը յդում էր տալիս Նիկոլ Փաշինեանին, որ Արցախում բնակչութեան անվտանգութիւնն ապահովւած էր, սա ցնորք է, ի՞նչ անվտանգութեան մասին էր խօսքը:

Ոչ մի ղարաբաղցի իրեն երբեք Ադրբեջանի կազմում չի պատկերացնում, մեր առջեւ երեք հիմնական խնդիր էր դրւած՝ կամ ինտեգրւել Ադրբեջանին, պայքարել՝ թէկուզ սովի պայմաններում, եւ վերջապէս՝ դուրս գալ Արցախից, մենք նախընտրել էինք պայքարով մնալ Արցախում, սա է եղել ժողովրդի կամքը: Թուրքը թուրք է մնում, արիւնը դեռեւս չի չորացել:

Այս իշխանութիւնը ոչնչացնում, արմատախիլ է անում այն, ինչ կապւած է Արցախի հետ, պետականութիւնը թաղում են, զցում են փոսի մէջ ու թաղում, որպէսզի նորից չյառնի»,- շեշտեց նա:

## «ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ»-ը

բեմում կը լինի



երեք օր՝
երեքշաբթի,
չորեքշաբթի եւ
հինգշաբթի,
նոյեմբերի
14-ին, 15-ին եւ 16-ին

Տոմսերը
սահմանափակ են

Դիմել **«tiwall.com»** կամ
**Հ. Մ. «Սիփան» միութեան** գրասենեակ


## ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆ

Խաժակ, Ժանեթ, Ժենիա եւ Կարինէ Բաղդանեանները, իրենց շատ սիրելի եւ թանկագին՝

**ՆԺԴԵՀ ԲԱՂԴԱՆԵԱՆԻ**

մահուան առաջին տարելիցի առթիւ

30.000.000 ռիալ նուիրում են «Ալիք» օրաթերթին:


آژانس مسافرتی
هفت ستاره آسمان آفتابی

7 STARS



خدمات آژانس مسافرتی هفت ستاره آسمان آفتابی :

✦Հայաստանում՝
Ամերիկայի եւ Կանադայի դեսպանատների հերթագրման ապահովում

✦ Թուրի անմիջական գործադրողը՝
Հայաստանում եւ աշխարհի այլ վայրերում
مجری مستقیم تور در ارمنستان و دیگر نقاط جهان

09303810625 WhatsApp tel: 021-88796742-3



Qeshm Air
IRAN AIRTOUR
VARESH AIRLINES
Armenia airways

7setaretours



مسافربری بین المللی

www.didarseir.ir
Email:info@didarseir.ir



دفتر مرکزی
تهران،میدان آزادی،پایانه غرب،شرکت مسافربری
بین المللی دیدار سیر گیتی
تلفن 021-44659543 • 021-44693051-4 • 021-44663893-4

نمایندگی نارمک
چهل و شش متری غربی نارمک،انتهای خیابان
گلستان،خیابان گلشن دوست(مسیل باختر)،نبش
خیابان طوروسیان(84)،پلاک 43
تلفن 021-77281287 • 021-77281288 • 021-77821769 • 021-77259537 • 09366955599
واتساپ
اینستاگرام @Didarseiregity

دفتر ایروان
خیابان نالباندیان - شماره 28
تلفن +374-91595521 +374-94371237

دیدار سیر گیتی
DIDAR SEIR-E-GITY
Միջազգային
ուղեւորափոխադրումների
27 տարուայ փորձով այն
պատրաստ է սպասարկել Ձեր
հայրենակիցներին
Ամենօրեայ ուղեւորութիւն VIP
հանրակառքով

Մէկ տեղանոց (VIP)
Աթոռ մահճակալ
Մոնիտորով
Յագեցած է WiFi-ով





Computer AGMA

Համակարգչային
ընկերութիւն

خرید و فروش کامپیوتر
ارتقاء سیستم
سرویس در محل

سخت افزار
نرم افزار
شبکه

Tel: 88849305 & 88842385
ایرانشهر شمالی، کوچه نوشهر، پلاک ۳۲، واحد ۶


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝**
**առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համաձայնելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝88761154

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**


# ԱԼԻՔ
Օրաթերթ

Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԷՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ - ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994

E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՈՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՈՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ



Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վաhիկ Իսկանդարեան



موسسه خیریه بهنام دهش پور حمایت از بیماران مبتلا به سرطان
Behnam Daheshpour Charity Organization
behnamcharity.org.ir
@behnamcharity

**چشم‌انداز:** جهانی بدون ترس از بیماری سرطان
**ماموریت:** برانگیختن امید به زندگی و حمایت از بیماران مبتلا به سرطان بدون محدودیت سن، ملیت، مذهب، جنسیت، نوع و مرحله بیماری سرطان و مشارکت در برنامه جامع ملی کنترل سرطان

خدایا تو بر کار خیرم بدار

باهم مهربانی را کامل کنیم.

*۷۳۳*۷*۱۸#



سفر دوستان قرن
SAFAR DOUSTAN GHARN
TOUR & TRAVEL AGENCY

Qeshm Air

نمایندگی رسمی
هواپیمایی قشم ایر

شرکت خدمات مسافرتی و جهانگردی سفردوستان قرن

Թռիչքներ է իրականացնում
երկուշաբթի եւ հինգշաբթի օրերը՝
դէպի Հայաստան եւ վերադարձ

**ԹեՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹեՀՐԱՆ**

تهران، خیابان شهید بهشتی، بین بزرگراه مدرس و قائم مقام، پلاک ۲۷۱، طبقه همکف

WWW.SAFARDOUSTAN.COM

۸۸۵۱۴۰۵۰




## Յարգելի նուիրատու

Շնորհակալ ենք Քո սրտաբուխ նուիրատուութեան համար:
«ԱԼԻՔ»-ի սիրտը բաբախում է Քո եւ սրտակից ընթերցողների շնորհիւ:
Այս դժուարին պայմաններում Դուք ներշնչում էք մեզ աւելի հաւատք մեր գործին եւ աշխատելու նոր եռանդ, որպէսզի «ԱԼԻՔ»-ը ամէն օր մուտք գործի Ձեր տուն:

*Շնորհակալ ենք, որ Դուք կաք:*

Յարգանօք՝
«ԱԼԻՔ» օրաթերթի
Յայտարարութիւնների բաժին

## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ՌԻՏԱ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ (ՋԱՐԻՖԵԱՆ)**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ շաբաթ, նոյեմբերի 11-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, նոյեմբերի 14-ին, ժամը 15:00-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 13:30-ին ներկայ գտնուել հետեւեալ վայրում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Բահար Շիրազ պող., Աթաբաք պող., Սերաջ փակուղի, համար 4, առաջին յարկ:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Ուս. «Չհարմահալ» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Սարգիս եւ Ասպետ Յարութիւնեաններ՝ ամուսինը եւ որդին:

Մելին եւ Դաւիթ Աբուլեաններ՝ դուստրը եւ փեսան՝ զաւակով:

Շահէն եւ Նայիրի Յարութիւնեաններ՝ որդին եւ հարսը՝ զաւակով:

Վազգէն եւ Էլպիս Ջարիֆեաններ՝ եղբայրը եւ եղբօր կինը՝ ընտանեօք:

Սեդա Բաբայեան՝ քոյրը՝ ընտանեօք:

Դանիէլեան, Ասլանեան, Բալայեան, Աբուլեան, Նազարեան եւ Բաբայեան ընտանիքներ՝ հարազատները ու խնամիները:


املاک هنرمندان

● بزرگترین آژانس مسکن مرکز شهر تهران (منطقه ۶)

● خانه های قدیمی تخصص ماست

آدرس: میدان هفت تیر، کریمخان، خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴

تلفن: ۸۸۸۴۵۵۶۶ – ۸۸۸۴۵۵۷۷

واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰

مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴

مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی



**ՔԱՐԻՄԻ**

Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ

خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی، مبلمان، خرده ریز و لوازم آنتیک

Հեռ.՝ 88594063 եւ 09121193212



**«Արարատ»**

Ամէն տեսակ տնային իրերի գնորդ

سماور ذغالی، نقره جات، ظروف مسی، چراغ لاله و لوستر، رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ، لوازم چوبی آنتیک و خرده

Հեռ.՝ 88523388



ԱԼԻՔ-ի Internet-ային էջն է

www.alikonline.ir


## «ՀՈՒՍԿ» ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝

## ԴԱՍԱԽՕՍԱԿԱՆ ԵՐԵԿՈՅ

Նիւթ՝ منازعه در حاشیه، بحران در مرکز آینده بین المللی بحران قفقاز

**Կոնֆլիկտը՝ լուսանցքում, ճգնաժամը՝ կենտրոնում. Հարաւային Կովկասի միջազգային ճգնաժամի ապագան**



Դասախօս՝

**Դոկտ. Էբրահիմ Մոթաղի**

رئیس دانشکده حقوق و علوم سیاسی دانشگاه تهران

Դասախօսութիւնը տեղի կունենայ ս. թ. երեքշաբթի, նոյեմբերի 14-ին, ժամը 19:00-ին, «ՀՈՒՍԿ» հաստատութեան կենտրոնատեղիում

Հասցէ՝ خیابان استاد مطهری، خیابان فجر (جم سابق)، کوچه نظری، پلاک ۴

«ՀՈՒՍԿ» ՀԱՍՏԱՏՈՒԹԻՒՆ


Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**

IRAN AIRTOUR AIRLINES — Qeshm Air

برای تهیه بلیط می توانید با

شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی

agency@sati-co.com ۹ –۸۸۵۴۱۲۹۸ و ۵–۸۸۵۴۱۲۴۲–۰۲۱

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «ناربه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹

و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

آژانس مسافرتی «بازه»

BAZE TOUR & TRAVEL AGENCY

Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան

Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824

نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۸۲۴ ۲۲ ۱۰۲ ۳۷۴+ , ۳۰۵ ۷۵ ۹۶۵ ۳۷۴+

Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


## ԲԱՔՈՒ....

(Շար. 1-ին էջից)

*որպէս սիոնիստական գործակալներ, ովքեր կոչւած են սեպ խրելու Իրանի եւ Բաքւի յարաբերութիւնների մէջ: Պանթուրքիստական նոյն այդ լաբբին, սակայն աչք է փակում սիոնիստների հետ Ալիֆի համագործակցութեան վրայ, ինչպէս նաեւ նրա եւ անջատողականների, ՆԱՏՕ-ի, փախլաւիների, վահաբիների եւ այլնի հետ Իրանի դէմ դաշինք ձեւաւորելու վրայ:*

*Սոցիալական ցանցերում նրանց «զինւորիկները» անխոհեմ ու լկտի հրապարակումներ են անում այն ուժերի դէմ, ովքեր Սիրիայում կռուել են ԴԱԷՇ-ի դէմ ի շահ Իրանի, կամ մեդիահարթակում նւազագոյն հնարաւորութիւններով լուսաբանումներ են հրապարակել՝ տեղեկացնելով Արաքսի հիւսիսից մեզ ուղղւած վտանգների մասին: Նրանց կոտրւած գրչի վերջին կրակոցը՝ կեղծ վերլուծութիւններ տարածելն էր առ այն, որ Բաքու-Իրան յարաբերութիւնների սառոյցը կոտրել չի յաջողւում, քանի որ այն դուր չի գալիս Իրանում բուն դրած սիոնիստապաշտներին:*

*Նիւթին կից լուսանկարը կապւած է սիոնիստական ռեժիմի եւ Բաքւի պատերազմի նախարարների հանդիպման հետ եւ յստակօրէն վերաբերում է Իրանի եւ Բաքւի սահմանային շրջանին, որտեղ ցուցադրւում են Իրանի վրայ ենթադրեալ յարձակման պատրանքները:*

*Մովահեդեանը յաւելել է, որ նկատի ունենալով Ջիբրայիլի (Ջրական) եւ Զանգիլանի (Կովսական) շրջանների առանձնայատուկ նշանակութիւնը Խոդաֆարինի ամբարտակի եւ պատմական կամրջի առկայութեան պատճառով, որոնք Բաքուն օգտագործում է մեդիա-հոգեբանական պատերազմի նպատակներով, գոյութիւն ունի նաեւ «Զանգիլան» անունը կրող ռազմական օդանաւակայանը, որը սահմանամերձ շրջանի նմուշների համեմատութեամբ ունի շատ աւելի բարձր հնարաւորութիւններ, եւ հաւանաբար քարտէզի վրայ սիոնիստական ռեժիմի պատերազմական նախարար Իւաֆ Գալանտի ուշադրութեանը յանձնած կէտը այդ երկու շրջաններն են:*

*Նշենք, որ արցախեան երկրորդ պատերազմի ժամանակ իրանցի սահմանապահների կողմից կիրառւել էր յատուկ միջոցներ Խոդաֆարին ամբարտակը պատերազմի աւերածութիւններից պաշտպանելու, ինչն այն օրերին նաեւ դուր չէր եկել Բաքւին:*

*Փորձագէտը յիշեցրել է նաեւ, որ յայտնի գործակալ-սիոնիստ Բրենդա Շաֆերայը, ինչպէս նմանօրինակ այլ անձինք բազմիցս այցելել են նոյն շրջաններ եւ խորհրդանշական լուսանկարներ հրապարակել, ինչը նաեւ կարող է ոչ-պաշտօնական հաղորդագրութիւն որակւել Խոդաֆարին պատմական կամրջի մօտից:*

*Այս եւ նմանօրինակ դէպքերը ապացուցում են, որ Իսրայէլի համար սահմանային այս տարածքները պարունակում են յատուկ կարեւորութիւն:*

*Պանթուրքերը պնդում են, որ այս քարտէզում նշւած տեղանքի գտնւելու վայրը անյայտ է: Իհարկէ սա գալիս է նրանց տարածաշրջանի տեղագրութեան ու աշխարհաքաղաքականութեան չիմացութիւնից, իհարկէ Իսրայէլի հետ Բաքւի դաւադրութիւնն անգոյն ներկայացնելու ենթատեքստով:*


SET Coffee

فروشگاه: هفتم تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰

کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷

0936-6726563

021-88305827

www.set-coffee.com

قهوه سِت


## ՄԱՀԱԶԴ

Խոր վշտով համակւած յայտնում ենք մեր շատ սիրելի եւ թանկագին՝



**ԱՐԱՔՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ**

ցաւալի մահը, որը տեղի ունեցաւ ուրբաթ, նոյեմբերի 10-ին:

Թաղումը կը կատարուի երեքշաբթի, նոյեմբերի 14-ին, առ. ժամը 11:30-ին, Նոր Բուրաստան գերեզմանատանը:

Յուղարկաւորներից խնդրում ենք նոյն օրը՝ ժամը 10:30-ին ներկայ գտնուել հանգուցեալի բնակարանում՝ գերեզմանատուն մեկնելու համար:

**ՀԱՍՑԷ՝**

Գոլբարգ պող., Բեհրուզ Ռաֆիա պող., 5-րդ փակուղի, համար 12, առաջին միաւոր:

Ցաւակցութիւնները՝ գերեզմանատանը եւ Հ. Մ. Մ. «Նայիրի» միութեան սրահում:

**ՍԳԱԿԻՐՆԵՐ՝**

Ռազմիկ եւ Նարինէ Գալստանեաններ՝ ամուսինը եւ դուստրը:

Անգինէ եւ Սայմոն Սիմոնեաններ՝ դուստրը եւ փեսան:

Իւղաբեր Մանուկեան՝ քոյրը:

Մանուկեան, Գալստանեան, Սիմոնեանս, Թորոսեան, Մովսիսեան, Փանոսեան, Զաքարեան, Աղաջանեան եւ Պօղոսեան ընտանիքներ՝ հարազատները:

## ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

Այսու ազգային մարմինների, հիմնարկութիւնների, միութիւնների, դպրոցների եւ ընկերութիւնների ու բոլոր յարգելի ընթերցողների ուշադրութեանն ենք յանձնում, որ իրենց

**յայտարարութիւնները օրաթերթիս յանձնեն առ. ժամը 8-ից մինչեւ կ. յ. ժամը 2-ը ամենաուշը երեք օր (աշխատանքային օր) նախքան տպագրութեան թւականը,**

բացի

**մահազդերից, որոնք ընդունւում են նաեւ նոյն օրը առաւօտեան՝ մինչեւ ժամը 9-ը:**

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ